



ՀԱՅԵԿԻՈՐ ԱՄԱՅԵՐԹ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ  
**"PAPERE"**  
 REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE  
 ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE

Téléphone C. 03-97

Rédaction et Administration :  
 7, Rue Papère — MARSEILLE

ԺԳ. ՏԱՐԻ - ԱՊՐԻԼ 1938

14<sup>me</sup> Année - Avril 1938

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                       |                        |
|---------------------------------------|------------------------|
| Խմբագրական                            | Յ. Ն. Ղ.               |
| Հոգ. կեանք                            | Թ. Գ. Մ.               |
| Հաշուեկշռին Վերաքննումը               | Ա. Օ. Փափազեան         |
| Աւագ Շարժումայ խորհրդածութիւններ      |                        |
| Հնորիաց Եովէն                         | Ա. Տէր Աթանասեան       |
| Որդին զիս ալ ազատեց                   |                        |
| Հողեր եւ Շաղեր կենաց ածուներէն        |                        |
| Պատեքի պատմութիւն մը — Սուրբ Աստուծոյ |                        |
| Արդարութիւնն ու Ողորմութիւնը — Մահ    |                        |
| եւ Յարութիւն — Հատկուան Հանգուակները  |                        |
| Սփըրճըն եւ Մեծ Ժառանգութիւն մը        | Հաւաքեց՝ Վեր. Ժ. Կ. Պ. |
| Ս. Գրական սերտողութիւն                |                        |
| Եկեղեցին                              | Scotfieldէն            |
| Սիրոյ էջեր                            |                        |
| Եթէ...                                | Սամուէլ Պ.             |
| Բնականական                            |                        |
| Մովսէս Մարգարէին Մայրը                | Վեր. Ե. Քասունի        |
| Պատանեաց                              |                        |
| Ճորճ Միւլըր — Աղօթքը                  | Թ. Գ. Մ. Լ. Իսրայէլեան |
| Անոնց որ Նեղութեան մէջ են             | Թ. Գ. Մ. Պարսամեան     |
| Մանկանց                               |                        |
| Սիրել եւ Սիրուել                      | ***                    |
| Անվախ Եղիր Նայէ՛ Փրկչին               | Ճորճ Մարտիրոսեան       |
| Հանազան Լուրեր                        |                        |
| Երբ                                   | Յ. Ն. Ղ.               |



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը եւեւ փրանաճայ Աւետարանա-  
կան եկեղեցիներու պաշտօնածերթն է, այսու ամենայնիւ,  
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը  
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ  
վկայութեան: Փանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը  
անհասներու համար, այլ ամենուն, բոլորի Տշմարիտ «Բանօին»  
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,  
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը  
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

=====

**«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսածերթը կը հրատարակուի Մարտէյլի մէջ 16 էջերով՝ (կողքէն զատ)**  
**անոր խմբագրական ժարմինն անդամներն են**

Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ  
ԲՐՈՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐՈՂԱՍԵԱՆ



ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք  
գիտեն վերափն ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ  
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:  
Յօդուածայարքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան  
ծեւքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընձեռնել եւ մեղանով գրուած  
ծեւքին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-  
գրութիւնը յօդուածները յապակելու եւ սրբագրելու եւ օգտակար  
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք  
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք  
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են  
առաջուրէն հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց  
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապու համար:

=====

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ  
բաժանորդագրութիւնը կ'զկսի ամէն տարի Յունուարին  
եւ կը վերջանայ Գեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 Ֆրանք, Սուրիա 20 Ֆրանք  
Արտասահման Տոլար 1. 25

**Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր**  
**Հ Ե Տ Ե Ի Ե Ա Լ Բ Ա Ց Ա Տ Ր Ո Ի Թ Ի Ն Ը**

===== Ամերիկայէն travelers check, թղթադրամ =====  
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ:  
Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:

Յօդուածներ զրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆի  
իսկ թղթաւիցութիւններ եւ դրամական առաքումներ  
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆի անունով, երկուքն ալ  
հետեւեալ հասցեով.—


Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN  
7, Rue Papère  
MARSEILLE (France)

Մանտայով գրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ գրել  
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille



Արմենի'ր դուն  
որ կը քնանաս, եւ  
կանգնէ մեռելնե-  
րէն, ու Քրիստոս  
քեզի լոյս պիտի  
տայ:  
Եփես. Ե. 14

# ԲԱՆԲԵՐ



Պարբերականը, որ չըլլայ Թէ  
Անոր հանգիստը մանկու խոտանանքէն որ մեզի մնացեր է,  
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի: ալ աս-  
կէ քիչ մը ատենէն  
Ան որ գալու է՝  
պիտի գայ ու պի-  
տի հուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1958

ԹԻԻ 4



## ԱՆՈՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

ԶՍՏԱՎԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Եւ կենդանի եմ, եւ դուք կենդանի պիտի ըլլաք: Յովհ. ԺԴ. 19

**Մ**Ե՛Ր պահոց շաբաթներուն մէջ կը գտնուինք մեր աչքերը ուղղուած են դէպի աւագ շաբաթն ու յարութեան առաւօտը: Այդ շաբաթը լիքն է տիեզերական պատմութեան ամենակարեւոր դէպքերով: Մարդկութիւնը Քրիստոսի հետ իր ճգնաժամի պահերէն կ'անցնի: Հոն կը լուծուի լինելու ու չլինելու, կենաց ու մահուան խնդիրը: Խնդրոյ առարկան թէեւ միշտակ ինքը կ'երեւի, սակայն մարդկութիւնն ալ փաթթուած է անոր, քանզի իր ճակատագիրն է որ կը վճռուի Քրիստոսի մահուան ու կեանքին հետ:

Ու մեր Տէրը այդ ճգնաժամային վայրկեաններուն լրջութեան գիտակցութիւնով իր շուրջը հաւաքած է աշակերտները ու անոնց կը բացատրէ գալիք ժամերուն ծանրակշիռ հետեւանքը աշխարհի համար, սակայն օրհնաբեր ու լուսաւոր արդիւնքը իրենց համար: Ու այնպիսի հանդարտութեամբ կը խօսի անոնց որպէս թէ ինք դուրս է խնդրէն և ամեն դէպքեր պիտի դառնան անոնց երջանկութեան առ հաշիւ:

Սիրտերնիդ չիտովի...: Հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ...: Նորէն կ'ուզամ և ձեզ քովս կ'առնեմ, որպէս զի ուր եմ, դուք ալ հոն ըլլաք: Զեզ որք չեմ թողուր կ'ուզամ ձեզի:

Ըսի թէ Տէրը այնպէս կը խօսի, որպէս թէ ինք խնդրէն բոլորովին դուրս ըլլար. այսպիսի պարագայ մը պիտի ապացուցանէր թէ կամ ինքը չէր կրնար կշռել խնդրոյն ծանրութիւնը, կամ թէ տողարուած էր իր աշակերտներուն բոլորո-

վին անձանօթ խորհրդով մը: Բայց երբ կը քննենք այս գլուխը, և անցած ու յետագայ գլուխները, կը տեսնենք թէ բոլորովին գիտակից է խնդրէն ու մեծ անձկութեամբ մը՝ կարծես անհամբեր ուրախութեամբ կը տազնապի այդ վայրկեանին մօտենալուն, քան զի Քրիստոս ասոր համար եկած է, որ կարենայ ազատօրէն աղաղակել մարդկութեան և տիեզերքը բոնող բոլոր ոյժերուն. «Ամեն բան կատարուեցաւ»:

Ինք գիտէր թէ մահը իրեն համար վերջակէտ չէր նշանակեր և մահուան դռնէն անցնիլը ընդհատում մը երեւան չպիտի բերէր իր մէջ գըտնուած յաւիտեանական կեանքին (համար 6, Եբր. Ի 16), հապա միայն փառաւորութեան անցնիլ մը պիտի ըլլար:

Այս մահուամբ դարաշրջան մը կը փակուէր: Աշխարհ այլեւս չպիտի տեսնէր զԱյն, մինչեւ այն օրը, երբ պիտի ըսէ «Անոր երեսէն ո՛ւր փախչինք, լեռներ մեր վրայ ինկէք, բլուրներ մեզ ծածկեցէ՛ք»: Սակայն ճիշդ ատով նոր դարաշրջան մը կը բացուի իրեն հաւատացողնե-րուն համար. «Դուք պիտի տեսնէք Զիս, վասնզի եւ կենդանի եմ եւ դուք ալ կենդանի պիտի ըլլաք»:

Տէրը այս խօսքը հաստատեց յարութեան օրը, երբ աշակերտները բոլորովին տրտմած վիճակի մը մէջ յուսահատութեան մատնուած անհովիւ ոչխարներու նման ճարահատ մնացած էին: «Խաղաղութիւն ձեզի»: Աշակերտները այս դէպքէն թերեւս արբշիռ ինքզինքնին աչքի



տեսիլքի մը առջեւ կը գտնէին, սակայն չէին կրնար իրենց զարմանքը չյայտնել և չհաւատալ իրականութեան: Յիսուս կ'ապրի: Անիկա ըսաւ. ես կենդանի եմ: Անիկա կ'ապրի այլեւս տարրեր առումով: Անտեսանելի ու նաեւ տեսանելի, յաւիտենական անապականացու մարմինի մը մէջ, Անիկա կ'ապրի այլեւս ո՛չ թէ Պաղեստինի մէջ, հապա նոր մարմինին յատկութեանց շնորհիւ ամեն տեղ ու նաեւ Ս. Հոգիին միջոցաւ հաւատքով կը բնակի հաւատացեալին սրտին մէջ: Այս բնակութիւնը ո՛չ թէ գաղափարական է, հապա իրական, ո՛չ թէ Քրիստոսի գաղափարները, ո՛չ թէ գաղափարական Քրիստոսը պիտի բնակի հաւատացեալին մէջ, հապա նոյն Ինքն անձը — կենդանի Քրիստոսը, որպէս զի իր այդ կեանքը թափանցէ հաւատացեալին կեանքին ու բոլոր գործառնութիւններուն մէջ: «Դուք իմ մէջ, և ես ձեր մէջ»: Այս կեանքին ներկայութիւնը հաւատացեալին մէջ կեանք երեւան կը բերէ, հաւատացեալը կ'ապրի Ս. Հոգիին հեղումովը և Անոր Քրիստոսի օրէ օր յայտնութիւնովը՝ իր մէջ: Անիկա պիտի ապրի այս աշխարհի կեանքի սահմանէն անդին: Այո՛, երբ այս մարմինը գործունէութենէ դադրի, երբ աչքերը փակուին և չկրնան տեսնել, երբ զգայարանքները իրենց պաշտօնը այլեւս չկրնան կատարել, երբ հոգը հոգին յանձնուի, հաւատացեալը պիտի ապրի, Քրիստոսի յարութեան գործութիւնովը: Անիկա պիտի հագնի օր մը այն նոյն մարմինը, զոր Աստուծոյ տան մէջ հոգով իր անգրանիկ Եղբայրը հագուած է յարութեան օրէն սկսեալ:

Դուք կենդանի պիտի ըլլաք: Այս վէճ խոստման վստահելով էր որ Վեր. Եղոյեան իր մահ-ուանէն քիչ առաջ ըսաւ. «Եթէ մեռնիմ, զիս փոս մը նետեցէք և ըսէք թէ Պատ. Եղոյեան անմահացաւ»:

Այդ խոստման յենով էր որ ասկէ տարիներ առաջ Մարսէլի եկեղեցւոյ ծերունագարդ հոգաբարձուներէս մին, երբ պատահամբ իր մահէն քանի մը ժամ առաջ քովը կը գտնուէի, կը հարցնէր իր սիրելի աղջկան. «Ժամը քանի՞ն է: Ա՛հ, պանդուխտը հրաժեշտ տալով աշխարհի, իր ճեպընթացին կ'սպասէր որ զինքը իր իրական հայրենիքը տանի ու այդ երկրին կարօտը քաշելով այլեւս ժամերը կը համրէր, անհամբեր այն վայրկեանին՝ երբ նա լման պիտի վայելէր հայրենիքն ու Փրկչին ներկայութիւնը:

Այդ խոստումն էր որ կը զօրացնէր սիրտը այն սիրելիիս, որ Ամերիկայի մէջ յանկարծ կաթուածահար եղած իր վերջին չորս ժամերու

կեանքին մէջ լման մէկ ու կէս ժամ կրնար խօսիլ, կանչելով իր բոլոր զաւակները, հարսները, կը խօսէր անոնց յաւիտենական բաներու մասին և յետոյ ձեռքը վերցնելով կ'ըսէր. «Փառք Քեզ Տէր» կ'երգէր երգի մը մէկ համարը և յետոյ կը ձայնէր. «Տէր, եթէ կը կանչես զիս, պատրաստ եմ գալու»: Հոս մահ չկայ, անցնիլ մըն է, անփառունակէն փառաւորեալին, անցաւորէն յաւիտենականին, երկրէ դէպի երկինք, շուքէն իրականին: Դուք կենդանի պիտի ըլլաք...:

Անցեալ տարի յուղարկաւորութիւնը կատարեցինք քրոջ մը, որ տասնը չորս երկար աճիսներ քանսէրի հիւանդութեան տաժանելի ցաւերով տանջուեցաւ: Հիւանդութեան այդ բոլոր ժամանակաշրջանը իրեն և մեր եկեղեցիին համար յաղթութեան ժամանակ մըն էր: Անոր բերանէն ո՛չ մէկ տրտունջ լսուեցաւ, հապա միայն երգ, փառաբանութիւն, օրհնութիւն, մխիթարութիւն իրեններուն և ուրիշներու:

Յուղարկաւորութեան առթիւ, երբ իր ամուսնոյն թեւը մաած կը քալէի, իրաւունքով ըսի անոր. Յակոբ աղա ասիկա յուղարկաւորութիւն չէ, այլ յաղթութիւն, մեր քոյրը իր յաղթական մուտքը կը կատարէ իր հայրենիքի դռնէն ներս, ուրեմն այս հանդէսը հարսանեկան հանդէս մըն է, ուրախութեան հանդէս մըն է, քան զի նէ կ'ապրի, աւելի փառաւորեալ կեանք մը իր Փրկչին խոստման համաձայն:

Յարութեան առաւօտուն զանգակները կը ղօղանջեն: Անոնց քաղցրահնչիւն ձայնը աւելի հեռուէն եկող ձայներու յիշատակը կ'արթնցնէ իմ սրտին մէջ: Յիշատակը շատ մը սիրելիներու, որոնց կարօտովը կը տարուինք, կրկին կը վերանորոգուի իմ մտքիս մէջ, նորէն ականջիս կը հնչէ անոնց շատոնց ի վեր լուծ ձայնը, ա՛հ այնքան մօտէն, զի յարութեան առաւօտը զիս կրկին մօտեցուցած է այն իրականութեան, թէ անոնք կ'ապրին և շուտով, շուտով անջրպետը պիտի դադրի գոյութենէ, ամպերը պիտի ճեղքուին ու ես պիտի տեսնեմ Փրկիչս դէմ առ դէմ, ինչպէս նաեւ բոլոր այն սիրելիները որոնք ինձմէ աւելի առաջ գացին: Ի՛նչ մխիթարութիւն Ա՛լ, աշխարհի ցաւերը, նեղութիւնները, դժուարութիւնները, տառապանքը, թուքն ու մուրը տանելի կը դառնան, պանդուխտը զիտէ թէ ինք հոս պանդուխտ է և աւելի լաւ կեանք մը կ'սպասէ իրեն: Հոն, ուր ալ ցաւ չկայ, արցունք չկայ, ժպիտ, լոյս և սէր կայ յաւիտեան:

Կը պաշտեմ քեզ ո՛վ յարուցեալ Քրիստոս այս գերերջանիկ յոյսին իրականութեան համար:

Յ. Ն. Դ.





## ՀԱՇՈՒԵԿՇՈՒՆ ՎԵՐԱՔՆՆՈՒՄԸ

Բայց ինչ որ ինձի շահ էր, զանիկա  
Քրիստոսի համար վնաս սեպեցի:  
Փիլ. Գ. 7-9

Ի՞նչ ցանկալի գանձեր ունեցած էր Պողոս իր անցեալին մէջ, զոր իրեն շահ սեպած էր: Կարծես պատկանած էր ամէն կարգի ազնուականութեան, որոնց մարդիկ կը ցանկան ու որոնց նկատմամբ երեւակայական զղեակներ կը շինեն: Այնպէս կը թուի թէ անիկա վերաբերած էր հարստութեան ազնուականութեան: Ստոյգ է թէ կրթութեան նախանձաւոր ազնուականութեան մէկ անդամն եղած էր: Նոյնքան վստահութեամբ կրնանք ըսել թէ անիկա կրօնական ազնուականութեան մէջ բարձր դիրքի մը տիրացած էր, ազնուականութիւն մը՝ որ անքուն կը հսկէր իր մուտքը: Անտարակոյս կը պարծենար նաև կրօնական բարձրաստիճան ու երեւելի ազգաբանութեամբ, որով ընտանի էր իր ազգին ամենաբարձր շրջանակներուն մէջ: Ասոնք անտարակոյս շահեր են, որոնցմով մարդիկ կրնան պարծենալ ու կեանքի հաշուեկշիւին վրայ իրրեւ թանկագին հարստութիւն ներկայացնել: Սակայն Առաքեալը զանոնք զգուշութեամբ կշռել է վերջ՝ հաշուեկշիւին շահի կողմէն պարտքի կողմը կը փոխադրէ ու «Քրիստոսի համար վնաս» կը սեպէ: Մեր դատողութեան արժէքը բոլորովին կախում ունի մեր գաղափարականին որակէն: Եթէ մեր գաղափարականը ցած է, մեր դատողութիւնն ալ անոր համեմատ անարժէք է: Ազտոտ ճամբու մը վրայէն յառաջացող ոչխարներու հօտ մը կրնայ մաքուր ու անարատ թուիլ, սակայն երկինքէն նոր տեղացող ապիտակ ձիւնին վրայ ազտոտ կ'երեւնայ: Ամէն ինչ կախում ունի մեր գաղափարականէն: Մեր մտատիպարին համաձայն փորձեր կը կատարենք: Փոքրիկ բլուր մը սքանչելի երեւոյթ մը կը ներկայացնէ անոր որ լեռ տեսած չէ, սակայն Հիմալայի վսեմ բարձրութեանց ծանօթ անհատի մը համար անիկա դաշտի վրայ գտնուող խլրդակոյտ մըն է միայն: Որչափ ժամանակ որ ազամանդին զգլխիչ պայծառութիւնը տեսած չենք, ապակին կրնայ ճանաչագեղ թուիլ:

Պողոս Առաքեալ քանի Տէրը տեսած չէր, մեծ

շահեր կը սեպէր իր ազնուականութեան աստիճանները, բայց երբ զարմանքով ահանաւես եղաւ Տէրոջը փառքին հրաւիր ճառագայթներուն, անոնք նսեմացան ու խաւարեցան: Տէրոջը պայծառութեան առջեւ Պողոսի նախկին շահերը ոչ թէ միայն արժէքէ ինկան ու անարգ դարձան, այլ անիկա բոլորովին դադրեցաւ անոնց վրայ մտածելէ, անյայտացան այն միտքէն որ զանոնք վսեմ ու նուիրական աւանդներ կը նկատէր: Այլեւս ամէն ինչ «Տէրոջը փառքին» չափանիշով դատելու էր: Թուլատրելու չէր որ որեւէ ուրիշ բան այս նուիրական ցանկութեան հետ մրցակցութեան մտնէր: «Եւ իբաւ բոլոր բաներն ալ վնաս կը սեպեմ իմ Տէրոջն Քրիստոս Յիսուսի գերազանց գիտութեանը համար»: Անգլթօրէն կոչնչացնէ հին հաշուեկշիւը: Այն խանդավառութիւնը որով իր հին շահերը կը հալածէր, նոր ընթացք մը կը բռնէ: Առաքեալին հօր կամքին կեդրոնացեալ եռանդը բոլորովին կը նուիրուի Յարուցեալ Քրիստոսի գաղափարին մասնակից ըլլալու նպատակին: «Որո՞ւ համար ամէն բանն զրկուեցայ»: Ամէն ինչ որ մարդիկ արժէքաւոր ստացուածքներ կը սեպեն, տուն, համբաւ, ստացուածք, նիւթական ակնկալութիւններ, սիրայօժար կը զոհէ, երբ ինքզինք նազովրեցիրն կը յանձնէ: Այսօր ալ տակաւին նոյնը կը պատահի այն օրը, որ հրեայ մը ինքզինքը Տէր Յիսուսին կը հպատակեցնէ: Անգամ մը օրհնեալ առանձնաշնորհումն ունեցայ խիստ ուշիմ հրեայ երիտասարդի մը Քրիստոսի լոյսին ու ազատութեան առաջնորդութեան իբրեւ միջոց գործածուելու: Այն վայրկեանին որ Աստուծոյ շնորհքը իր համոզիչ գործը տեսաւ ու երիտասարդ բարեկամս վճռական քայլն առաւ, անկէ խլուեցան ամէն մարդկային փափուկ յարաբերութիւն ու ստացուածք և տառապէս «ամէն բանն զրկուեցաւ»: Սակայն անոր ի՞նչ փոյթն էր: Ի՞նչ փոյթն էր նաև Պողոսի, որուն սիրտը ցնծութեամբ էր լեցուն:

«Եւ աղտեղութիւն կը սեպեմ»: Այո, Տէրոջը պատրաստած ամէն պարարտութեանը հետ բաղդատելով՝ ուրիշ ամէն ինչ աղտեղութիւն է ու տէրերու սեղանէն շուներու առջեւ նետուած փշրանք: Որո՞ւն հոգն են փշրանքները, երբ խնճոյքի Տէրը իր առատութենէն զոհացում կուտայ իր սեղանը նստողներուն: Ո՞վ իր գիշերները լալով ու կոծով պիտի անցնէ ժամանակաւոր կորուստի մը համար, երբ անոր փոխարէն յաւիտենական կեանք կը գտնէ: Ո՞վ իր սիրտը ցաւով պիտի մաշեցնէ թափառաշրջիկ կեանք մը



կորսնցնելուն համար, մինչ անոր փոխարէն մնայուն տուն մը կը գտնէ:


Ինչո՞ւ Առաքեալը այս բաները աղտեղութիւն սեպեց: «Որպէսզի Քրիստոսը շահիմ»: Այս է այլեւս Պողոսի համար «շահ» կոչուելու արժանի միակ բանը: Անոր միակ բաղձանքն ու փառասիրական նպատակն է աւելի ընդարձակ ու աւելի փառաւոր տեղ մը տալ իր Տէրոջը: Անիկա իր ամբարները պիտի փլցնէ ու աւելի մեծեր կանգնէ: Պիտի քակէ իր խորհուրդի, երեւակայութեան, սիրոյ ու անձնական կամքի շտեմարանները: Ետ պիտի մղէ սահմանափակ պատերը, որպէսզի աւելի լայնարձակ կեանքի մը մէջ, աւելի առատօրէն վայելէ Տէրոջը ճոխ ու ազատ ներկայութիւնը: «Որպէսզի Քրիստոսը շահիմ, ու իր մէջ գտնուիմ»: Երկար ատեն կարեւոր բաներու դուրսի կողմը ու շրջապատին եզերքը ապրած էր, սակայն հիմա ամէն բանի ճշմարիտ կեղրոնը գտած էր, ուստի անոր հրատապ բաղձանքն էր այդ կեղրոնին մէջ գտնուիլ, անոր հիմէն քաղել իր կեանքը ու իր երակները լեցնել Փրկչին: փրկարար սրտէն հոսող արիւնով:

Եւ ի՞նչ տարագով կ'ուզէ այլեւս պտտիլ: «Ոչ թէ իմ արդարութիւնը ունենամ որ օրէնքէն է»: Ետեւը պիտի թողու իր անցեալ տարիներու յաջողութեանց արձեւատական ու ողորմելի զգեստը, որ չունէր «դաշտի շուշաններուն» բնական ու զրաւիչ գեղեցկութիւնը: Ի՞ր անցեալի մէջ ունեցած արդարութիւնը «դուրսէն» առնուած էր, արդ, կը ցանկայ արդարութեան մը որ «ներսէն դուրս» կ'աճի ու փրկարար շնորհքի անխուսափելի արդիւնքն է: «Քրիստոսի հաւատքովը եղած արդարութիւնը՝ որ Աստուծմէ է հաւատքով»: Բողոքովին սիրալոյսար կը կորսնցնէ իր նախկին համբաւին մաշած ու զուռատած զգեստը, որպէսզի կարենայ շահիլ սրբազան նկարագրի շքեղ ու անեղծանելի հագուստը, որ ոչ թէ զործերու արդիւնք կամ ձեռքերով ձեւակերպուած է, այլ Աստուծոյ ձեռագործը ու Անոր առաստ շնորհքին կատարած ստեղծագործութիւնը:

Թարգմ. Ն. Մ.

### ՄՈՒՏԻԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մուտիէ խնդրուեցաւ որ իր կեանքին ստուերազիրը ընէ: Ինքն ալ հետեւեալը գրեց. «Մարմինէն ծնած եմ 1837ին, Հոգիէն ծնած եմ 1856ին: Ինչ որ մարմինէն ծնած է պիտի մեռնի. ինչ որ Հոգիէն ծնած է յաւիտեան պիտի ապրի»: (Յովհ. Գ 6):



### ԱԻԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Մատթ. ԻԱ 12, 13: Յովհ. Բ 13—17: Սղմ. Կթ 8, 9: Ա. Կոր. Գ 16, 17: Յայտ. Գ. 20: Տէրը նախանձաւոր է իր տանը. Յիսուս ուզեց մաքրել տաճարը «չօրը տունը»: Հրեաներ չ'ուզեցին, և խաչը հանեցին զԱյն, որ Տաճարէն մեծ էր: Դուն ի՞նչ դիրք կը բռնես Տէր Յիսուսի հանդէպ, երբ քու անմաքրութիւններդ ցուցնելով ուզէ քեզ մաքրել:

### ԱԻԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Մատթ. ԻԱ 18—22: Հոմ. ԺԱ 20—25: Ղուկ. ԺԳ 6—9: Մատթ. Գ 8, 10: Յովհ. ԺԵ 1—8: Տէրը իր ցաւերուն մէջ, խաչին ճամբուն վրայ, հաւատացեալներու պտուղին կ'սպասէ և անով կ'ուրախանայ. պտուղներովդ Տէրը կ'ուրախացնէ՞ս:

### ԱԻԱԳ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

Յովհ. ԺԳ 2—20: Փիլ. Բ 4—8: Հոմ. ԺԵ 1: Գաղ. 2 1—2: Խոնարհութեան և ծառայութեան հոգին, զոր Տէր Յիսուս իր մատնուելու պահուն և խաչին դիմացն իսկ ցուցուց, կեանքիդ անցած է, կընա՞ս սիրով և խոնարհութեամբ ծառայել նոյնիսկ մատնիչին և ուրացողին:

### ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Մատթ. ԻԶ 20—25: Յովհ. ԺԳ 21—30: Մատթ. ԻԶ 47—50, 55—56: Երբ. Գ 12: Բ. Պետ. Բ 1—3: Մատթ. ԻԴ. 10: Մատթ. ԻԶ 69—74: Բու վարքովդ, խօսքովդ ու կենցաղովդ Տէրը դաւանող և փառաւորո՞ղ մէկն ես թէ ուրացող և մատնող:

### ԱԻԱԳ ՈՒՐԱԲԹԻ

Մատթ. ԻԷ 20—50: Ա. Կոր. Բ 2: Գաղ. Բ 20: Զ 14: Յովհ. ԺԹ 40—42: Հոմ. Զ 6, 3—4: Մեռած ու թաղուա՞ծ ես քու անձիդ, «Ես»իդ: Լեզուդ, այսինքն խօսքերդ, վարուելակերպդ, մտածմունքդ, խորհուրդներդ և զգացումներդ մեռած ու թաղուա՞ծ են աշխարհի, մեղքի և մարմնի հանդէպ: Քրիստոսի խաչովը աշխարհ քեզի և դուն ալ աշխարհի խաչուա՞ծ ես: Աշխարհ քեզի հետ ունեցած հաշիւը



փակած, քեզ մեռած ճանչցած ու հռչակած  
և թաղա՞ծ է:

**ԱՒԱԳ ՇԱԲԱԹ**

Մատթ. ԻԷ 3—5, 62—66: Մատթ. ԻԶ 75:  
Ղուկ. ԻԳ 39—43, 49: Յովհ. ԺԹ 34, 25—27:  
Խաչին շուրջ կը գտնուին ինքզինքը խեղ-  
ճող, գերեզման կնքողներ, դառնապէս լա-  
ցողներ, հայհոյող և նաեւ փրկութիւն գտնող  
աւագակներ, խաչին նայողներ, Յիսուսի  
կողը խոցողներ եւայլն: Դուն ո՞ր դասակար-  
գէն ես, արդեօք մօտ ես Յիսուսի այնքան  
որ՝ Տէրը իր եկեղեցիին հոգը կրնայ քեզի  
վստահիլ, ինչպէս մօրը հոգը յանձնեց Յով-  
հաննէսի:

**ԿԻՐԱԿԻ, ԶԱՏԻԿ**

Մատթ. ԻԸ 1—10: Ա. Կոր. ԺԵ 57: Կող. Գ 1:  
Հով. Զ 4: Օրհնեալ յոյս, կրնա՞ս ըսել ուրա-  
խութեամբ և հաւատքով «Քրիստոս յարեալ  
ի մեռելոց»: Կրնա՞ս ցուցունել կեանքովդ թէ  
Անով յարութեան կեանքին հաղորդ եղած  
ես և վերի բաներուն մտածումովը լեցուն,  
կեանքի նորոգութեանը մէջ կ'ապրիս: «Օրհ-  
նեալ է յարութիւնն Քրիստոսի,

Տէրը օրհնէ քեզ:

Բօն-տ'Օպրնա

Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ



**ՈՐԴԻՆ ԶԻՍ ԱԼ ԱԶԱՏԵՅ**

«Եթէ Որդին ձեզ աղատ  
ընէ, ճշմարտապէս աղատ պիտի  
ըլլաք»: (Յովհ. 8 36)

Կ'օրհնեմ Տէրը որ ինծի «Որդիին ձեռքով  
աղատ» ըլլալու փառաւոր փորձառութիւնը շնոր-  
հեց: Բայց, նախ քան այս՝ նոյն գլխուն մէջ  
պատմուած հրեաներուն փորձառութեան մէջ կը  
գտնուէի ես, որոնք կ'ըսէին Յիսուսի «մենք Աբ-  
րահամի սերունդ ենք, ու երբեք մէկուն չծառա-  
յեցինք» (Յովհ. 8. 33):

Արդարեւ, եթէ երկու տարի առաջ, մէկը ինծի  
ընէր որ «դուն ազատագրուելու պէտք ունիս»,  
այնպիսոյն դէմ պիտի բողոքէի և զօրութեամբ  
պիտի փաստարկէի թէ՛ — ես աղատ եմ, քանի  
որ ես ալ Աբրահամի սերունդ եմ: Այսինքն՝  
կրօնքի արտաքին վերարկուն ունիմ իմ վրաս:  
Այս ուղղութեամբ, Տէր Յիսուսի հայեցակէտը

որքան կը տարբերի մերինէն: Ան կ'ըսէ «Կոյր  
փարիսեցի, առաջ զաւաթին ու պնակին ներսի  
կողմը մաքրէ, որպէսզի անոնց դուրսի կողմն ալ  
մաքուր ըլլայ» (Մատ. 23. 25-26):

Ի՞նչ երջանկութիւն է ինծի վերյիշել այն օրը  
երբ Քրիստոս զիս իրեն կանչեց: Երբէք պիտի  
չմոռնամ սա հրաշալի խօսքը, որով Ան զիս  
արթնցուց «կեղծ ապահովութեան» քունէս, որուն  
մէջ թաղուած էի, — «Ահա՛ ես դուրը կայներ եմ  
ու կը զարնեմ, եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուրը  
բանայ, անոր քով պիտի մտնեմ և անոր հետ  
ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինծի հետ» (Յայտ.  
3. 20):

Ա՛րդ, ի՞նչ էի ես այդ պարագային. — Մեղքով  
շղթայուած երիտասարդուհի մը, չարութեան  
գերի, անօրէնութեամբ պղծուած, խաչին արժա-  
նի աւագակ մը: Եւ ճիշդ այս անկեալ վիճակին  
մէջ գտնուող արարածիս, ինծի, այս անպատմելի  
պատիւը կ'առաջարկուի, «... Անոր քով պիտի  
մտնեմ և Անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան  
ալ ինծի հետ»:

Ալէլուիա՛, Տէրը թող մեծանայ, որ նոյն վայր-  
կեանին իր շնորհքովը կրցի հասկնալ և ընդու-  
նիլ խաչին վրայ թափուած արեան բովանդակ  
զօրութիւնը:

Կեանքիս մէջ, այս առաջին անգամն էր որ  
Քրիստոսի քարոզչիւրը կը լսէի, այն ալ «խաչ-  
եալ Քրիստոսը»:

Չայս ալ յիշեմ որ, նախապէս՝ Սուրբ Աւետա-  
րանի ամէնօրեայ ընթերցանութիւնը (որ մինչև  
այդ սոսկ մեռած զիր էր ինծի համար), և այլ  
նախապատրաստական միջոցներ իմ Փրկիչս  
օգտագործեց ի շահ իմ մէջս կատարելիք իր  
փրկարար գործին:

Այսօր կրնամ վկայել Տէր Յիսուսի փառքին  
համար թէ՛ իմ սրտիս մէջ գալէն և ինծի հետ  
ընթրիք ընելէն ի վեր երբեք պակսած չեմ հո-  
գեւոր հացէն, որ է «Բանը մարմին եղաւ» (Յով.  
Ա. 14). «Եթէ մէկը այս հացէն ուտէ, յաւիտեան  
պիտի ապրի» (Յով. 6. 52): Կ'օրհնեմ զԱստուած  
որ այն օրէն ի վեր երբեք ալ ծարաւած չեմ:  
Վասնզի իր շնորհքովը զիս ետ դարձուց «ծակոտ  
զուրբէն», որոնք չեն կրնար շուր պահել» (Երեմ.  
2. 13) և զիս առաջնորդեց «կենաց ջուրի աղբիւ-  
րին» որ ըսաւ, — «Ան որ ինծի կը հաւատայ, անոր  
փորէն կենդանի ջուրի գետեր պիտի բխին,  
զայս ըսաւ Հոգիին համար, որ իրեն հաւատա-  
թողները պիտի առնէին» (Յով. 7. 37-39):

Իմ փրկութեանս համար, ես ոչինչ ըրի, Յի-  
սուս ինծի համար ամէն բան ըրաւ: Ան զիս կան-




չեց: Ան զիս փրկեց: Ան զիս մկրտեց Հոգւով  
Սրբով և կրակով: Եւ հիմա զիս կը լեցնէ փա-  
ռաց Յոսուով և յաւիտենական զօրութիւնով:

Օրհնեալ ըլլայ իր անունը յաւիտեանս յաւի-  
տենից:

Ս. ՏէՐ ԱԹԱՆԱՍԵԱՆ



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ



ԿԵՆ ԱՑ

ԱԾՈՒՆԵՐԷՆ,

ՊԱՍԷՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Սըրճըն կը գրէ թէ Հրեաները այն անարկու  
Պասէքի երեկոյեան հետ առնչութիւն ունեցող  
պատմութիւն մը կը պատմեն: Հրեայ հայր մը  
տասը տարեկան աղջիկ մը ունէր, որ իր մէկ  
հատիկ սիրելի զաւակն էր: Նա ընտանիքին  
անդրանիկ զաւակն ըլլալով հրեշտակին հար-  
ուածին առաջին ենթական պիտի ըլլար եթէ  
իրենք անգրգոյշ ըլլային: Մանուկը տակաւին  
անկողին չգացած իր հօրը հարցուց թէ արիւնը  
դուան դրանդիքներուն վրայ քսուած է: «Այո  
քսուած է»: Մանուկը քնացաւ, բայց քունը  
խանգարուելով կրկին ու կրկին արթնցաւ և  
իւրաքանչիւր անգամին մտահոգութեամբ իր  
հօրը հարցուց, «Հայր, վստահ ես թէ արիւնը  
քսուեցաւ»: Անիկա ապահովցուց որ արիւնը  
քսուած է: Նա քնանալու աշխատեցաւ, բայց  
ի գո՛ւր: Կէս պիշեքէն քիչ առաջնա մեծ ցնցու-  
մով և դողալով կրկին արթնցաւ և աղաչեց հօր-  
մէն որ զինք իր բազուկներուն մէջ առնէ ու  
դուռը տանի որպէս զի արիւնը տեսնէ: Հայրը  
զայս կատարեց: Բայց մարդը ինչպէս անարեկե-  
ցաւ երբ դուան դրանդիքներուն վրայ արիւնը  
չտեսաւ: Անմիջապէս արիւնը առաւ և դրանդիք-  
ներուն վրայ քսեց և զաւակին ցուցուց թէ արիւնը  
քսուած է: Այն ատեն պզտիկը բոլորովին հան-  
դարտած անուշ քունի մէջ ընկղմեցաւ:

Հոգի, եթէ դուն ալ Գողգոթայի Գառին արե-  
անը քու սրտիդ մէջ սրսկուած ըլլալուն տակա-  
ւին կատարելապէս վստահ չես, արտեանունք-  
ներուդ նիւհում մի տար: Անմիջապէս Գողգո-  
թայի խաչին եկուր և Յիսուսի քաւչարար ու  
փրկարար արեանը զիմէ:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆ

ՈՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՆ

Անգամ մը քրիստոնեայ դատաւոր մը կարե-  
ւոր և կնճռոտ դատի մը դատաւարութեան ատե-  
նապետ որոշուեցաւ: Առաջունէ պատուաւոր  
եղած վաճառական մը դատաւարութեան կան-  
չուած էր, երկրի օրէնքներուն դէմ զործած  
ըլլալուն համար: Ամէն ոք անհամբեր կ'սպասէր,  
զիտնալու թէ այս դատաւարութեան հետեւանքը  
ի՞նչ պիտի ըլլայ: Որովհետեւ դատաւորը ամ-  
բաստանեալին բարեկամ էր իր մանկութենէն  
ի վեր և զթասիրտ ու մարդասէր մէկը ըլլալով  
կը կարծուէր թէ՝ անոր յանցանքը կամ պիտի  
թեթեւցնէ և կամ զինք բոլորովին անպարտ  
պիտի հռչակէ:

Բայց խնդիրը տարբեր եղաւ: Նա փաստա-  
բանին ոճրագործին ի նպաստ բերած վկայու-  
թիւնները գոհացուցիչ չգտաւ և անոր պատիժը  
թեթեւցնելու համար բերած պատճառները բա-  
նաւոր չգտնելով իր երիտասարդութեան ընկերը  
օրէնքին պահանջած ամենախիստ պատիժով  
դատաւարտեց: Նա պէտք էր կամ խիստ մեծ  
տուգանք մը վճարէր կամ թէ երկար ժամանակ  
բանտարկուէր:

Դատաւորը բոլորին զարմանք պատճառող  
այս խիստ վճիռը տալէն վերջ, անմիջապէս  
դատաւորի աթոռէն վար իջաւ և դատաստանա-  
գրին մէջ պահանջուած այն մեծ գումարը ինք  
անձամբ վճարելու համար մուրհակ մը գրեց ու  
զայն ստորագրեց: Բարձրագոյն ատեանին այս  
մեծ դատաւորը պատիժը իր վրայ առած էր:  
Այսպէսով օրէնքը կատարելապէս կատարուած  
էր, այսու հանդերձ ոճրագործը ողորմութիւն  
գտած էր:

Ասիկա Աստուծոյ Գողգոթայի վրայ մարդկա-  
յին ցեղին համար կատարած գործին մէկ տկար  
օրինակը կրնայ սեպուիլ: Անոր Որդին մեզի  
համար մարդ եղաւ և մեր արժանի եղած պա-  
տիժը ինք իր վրայ առաւ: Եւ Աստուած զԱսիկա  
մեղեկներէն յարուց և իր աջ կողմը նստեցուց  
այս քաւութեան բոլոր ժամանակներու համար  
իր կողմէն ընդունուած ըլլալուն ի նշան: Երբ  
մեր Փրկիչը խաչին վրայ ըսաւ. «Կատարուե-  
ցաւ», ալ մեզի ընելիք ի՞նչ մնաց: Մեր ընելիքը  
Տէրոջը մահուամբ ձեռք բերուած արդարացման  
թուղթը, այսինքն մեր փրկութիւնը հաւատքով  
ընդունիլ և անոր վրայ հաստատ կենալ է:



## ՄԱՂ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Մարթին Լուտեր անգամ մը այսպէս գրեց. «Յիսուս Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ»: Ասոր համար մեզի զօրաւոր և հասւած հաւատք մը պէտք է, որպէս զի այս նիւթը զմեզ զօրաւոր, հաստատ և օգտակար կացուցանէ: Ուրեմն Յիսուս Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ» խօսքերուն պէտք է լաւ ուշադրութիւն ընել և զանոնք մեծ գիրերով պէտք է գրել: Թող իւրաքանչիւր զիր աշտարակի մը բարձրութիւնը ունենայ: Այո՛, երկիրքի և երկրի չափ թող ըլլայ, անանկ որ մենք այս նիւթէն ուրիշ ոեւէ բան մը ոչ տեսնենք, ոչ լսենք, ոչ խորհինք և ոչ գիտնանք: Եթէ մենք ասոր հաւատանք, այն ատեն կրնանք հանդարտ ապրիլ և հանդարտ մեռնիլ: Քանզի Քրիստոս ոչ միայն Իրեն անձին համար մահուան յաղթեց և մեռելներէն յարութիւն առաւ, հապա մեզի համար ալ և «յարութիւն առաւ»ին մէջ մենք ալ կը պարփակուինք, այնպէս որ Ասոր միջոցաւ մենք ալ յարութիւն առնելով յաւիտեանական կեանք ստացանք:



## ԶԱՏԳՈՒԱՆ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ

1799ին երբ Նաբոլէոնի բանակները Եւրոպայի երկիրները արշաւելով կ'աւելին կ'անցնէին, Նաբոլէոնի ամենամեծ զօրավարներէն Մասսենա 18,000 զինուորներով Ֆէլտքիրխ քաղաքին ըլլորներուն վրայ երեւցաւ: Զատկի օրն էր: Քաղաքին խորհրդական մարմինը աճապարանօք հաւաքուեցաւ խորհրդակցելու համար թէ ի՞նչ զիրք բռնելու էին: Դիմադրե՞լ ի զուր: Արդեօք պէ՞տք էր որ Մասսենային ներկայացուցիչներ զրկէին որպէս զի քաղաքին խնայէր, ահա վերջին հարցը: Այս պահուն եկեղեցւոյ հոգաբարձութենէն ծերունի մը ոտքի ելաւ և ըսաւ. «Մենք մարմինի և արիւնի հարցուցինք, ուստի օգնութիւն չենք կրնար սպասել: Այս օր Տէրոջը յարութեան օրն է, եկեղեցիներուն բոլոր զանգակները զարնենք և սովորականին պէս մեր պաշտամունքները կատարենք ու խնդրը Տէրոջը յանձնենք»: Ասոր յանձնարարութիւնը ընդունուեցաւ: Իսկոյն քաղաքին բոլոր եկեղեցիներուն զանգակները հնչելու և Քրիստոսի յարութիւնը աւետելու սկսան: Փողոցները Տէրոջը տունը գացողներով լեցուեցան: Թշնամի բանակը հիացումի և վախի մէջ ինկաւ: Մասսենա խորհեցաւ թէ զիշերուան ընթացքին Աւստրիոյ բանակը քաղաքին օգնութեան հասեր էր և ուստի աճապարանօք ետ քաշուելու հրամանը տուաւ:

## ՍՓԷՐՃԷՆ ԵՒ ՄԵԾ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Անգլիա ապրող հարուստ մարդ մը մահուան անկողինի մէջն էր: Նա Սքըրճընի քանի մը քարոզները կարդաց և այնքան ազդուեցաւ որ իր հարստութեան մեծ մասը անոր կտակեց, 30,000 Անգլ. սսկիի գումար մը: Իսկ իր աղքատ ազգականներուն միայն փոքր գումար մը թողուց: Հիւանդը մեռնելէն և թաղուելէն յետոյ, երբ իր կտակը բացին, անոր ազգականները սարսափահար եղան երբոր անոր պարունակութիւնը խմացան:

Ասոր վրայ կտակը գործադրելիք պաշտօնեան Լոնտօն մեկնեցաւ որպէս զի Սքըրճընի հետ խօսի հանգուցեալին աղքատ ազգականներուն վիճակին վրայով:

Սքըրճըն այս գումարը ձեռք ձգելու համար իր իրաւունքին վրայ չպնդեց: Ո՛չ ալ խորհեցաւ թէ «Բարի նպատակներու ծախսելու համար այս գումարին պէտք ունէր» և նոյնիսկ չցանկաց պէթ մէկ մասը առնելու: Անիկա անմիջապէս իր նօթերէն խնդրեց որ իր կողմէն թուղթ մը գրէ թէ ինքը այդ բոլոր գումարէն կը հրաժարի և կտակը գործադրելիք պաշտօնեան ալ պարտադրեց որ յիշեալ գումարը հանգուցեալին աղքատ ազգականներուն մէջ բաժնէ:

Ասիկա անխօս քարոզ մ'էր. բայց կարելի է Լոնտօնի այդ «Քարոզիչներու իշխան»ին տուած ամենալաւ քարոզներէն մէկն էր:

Հաւաքեց՝ Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ



Ս. ԳՐԱԿԱՆ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝  
SCOFFIELDԷՆ  
Վ. ՍԱՀԱԿԱՆ

## ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցի բառը կը նշանակէ (տեղէ մը) դուրս կանչուածներու ժողովք: Նոյն իմաստով որեւէ համախմբում ալ՝ այս անունով կը կոչուի Սուրբ Գրքին մէջ: Օրինակ Գ. Առաք. ԺԹ 39ի մէջ Եփեսոսի խառնիճաղանճ ամբողջ էքզիէսիա (եկեղեցի) կոչուած է: Նոյնպէս ալ Իսրայէլ, Եգիպտոսէն դուրս հանուած բազմութիւնը, անապատը ժողովուած (եկեղեցի) կը կոչուի. (Գ. Առաք. է



58): Քանանու երկրին մէջ Իսրայէլ երբեք եկեղեցի կոչուած չէ: Իսրայէլ անապատին մէջ ճշմարիտ եկեղեցի մըն էր, բայց որն է կերպով Նոր Կտակարանի եկեղեցին չէր: Այս երկուքին միջեւ նմանութեան միակ կէտը՝ անոնց երկուքին ալ նոյն Աստուծոյ կողմէ (տեղէ մը) դուրս կանչուած ըլլալն էր: Ուրիշ ամէն կէտ իրարու հակասական է:

Նոր Կտակարանի եկեղեցին ճանչցուած է իբր հաւատքը դաւանողներու հաւաքականութիւնը: Պատմութիւնը եկեղեցի անուամբ կը յորջորջէ բոլոր այս խմբակցութիւնները, թէեւ տարբեր յարանուանական անուններով, տարբեր բաժանումներով, վարդապետութեան կամ կառավարչական տարբեր ձեւերով: Այս պատմական եկեղեցւոյն կամ եկեղեցիներուն ծոցին մէջ է որ զոյւլթիւն ունեցած է և ունի ճշմարիտ եկեղեցիին որ «Անոր մարմինն է, անոր լրումը՝ որ կը լեցնէ ամէնը ամէն բանի մէջ» (Եփես. Ա. 23): Այսպէս էր նաև Իսրայէլի մէջ «հաւատացեալ մնացորդը» (Հոով. ԺԱ. 5): Երեւութական եկեղեցիին համար մարգարէացուած ապագան հաւատութեանն է (Ղուկ. ԺԸ 8, Բ. Տիմ. Գ. 1-8): Իսկ ճշմարիտ եկեղեցիին ապագան փառք է (Մատթ. ԺԳ 36-43, Հոով. Ը 18-23, Ա. Թեա. Դ 14-17):

Տեղական եկեղեցին Տէր Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքը դաւանողներու խմբակցութիւնն է: Ասոնք կ'ապրին նոյն վայրին մէջ զլիաւորաբար՝ և միասին կը ժողովուին Անոր Անունովը հաց կտրելու, զԱյն պաշտելու, փառաբանելու, աղօթելու, վկայելու, Աստուծոյ խօսքը մատակարարելու, Աստուածապաշտութեան կրթանքի և Աւետարանին յառաջացման համար (Եբր. Ժ 25, Գ. Առաք. Ի 7, Ա. Կոր. ԺԴ 26, Ա. Կոր. Ե 4, 5, Փիլ. Դ 14-18, Ա. Թեա. Ա. 8, Գ. Առաք. ԺԳ 1-4): Այսպիսի եկեղեցի մը զոյւլթիւն ունի ամէն ուր որ երկու կամ երեք հոգի ժողովուած ըլլան (Մատթ. ԺԸ 20): Ամէն այսպիսի տեղական եկեղեցիի մէջ Քրիստոս ներկայ է, Աստուած զայն Իրեն տաճար կ'ընէ, և Սուրբ Հոգին անոր մէջ կը բնակի, (Ա. Կոր. Գ 16, 17): Երբ տեղական եկեղեցի մը կատարելապէս կազմակերպուած ձեւ մը կ'առնէ, կը բաղկանայ Սուրբերէ, որոնք կ'ունենան իրենց եպիսկոպոսները (երէցներ) և սարկաւազները:

Ճշմարիտ եկեղեցին կը բաղկանայ բոլոր վերատին ծնած անձերէն, Պենտեկոստէէն սկսեալ մինչեւ առաջին յարութիւնը (Ա. Կոր. ԺԵ 52): Անոնք իրարու և Քրիստոսի միացած են Սուրբ Հոգիին մկրտութեամբը (Ա. Կոր. ԺԲ. 12, 13):

Ճշմարիտ եկեղեցին Քրիստոսի մարմինն է և Քրիստոս անոր գլուխը (Եփես. Ա. 22, 23): Այսպէս ճշմարիտ եկեղեցիին անդամները Քրիստոսի մարմինին անդամները կոչուած են, Անոր մարմինէն ու Անոր ոսկորներէն (Եփես. Ե. 30, 31): Այս պատկերը առնուած է Ծննդ. Բ 23, 24էն: Եւս Ադամի մարմինէն առնուած, ճշմարտապէս «անոր ոսկորէն ոսկոր և մարմինէն մարմին էր», բայց Եւս նաեւ իբր կին Ադամի հետ մէկ մարմին էր (Մատթ. ԺԺ 5, 6) և այսպէս յստակ օրինակը եկեղեցիին իբր Քրիստոսի հարսը (Բ. Կոր. ԺԱ 2, 3): Հին Կտակարանին մէջ այս իմաստով եկեղեցիին ուրիշ օրինակներն են, Ռեբեկա (Ծննդ. ԻԴ 1-7), Ասանէթ (ԽԱ 45), Սեպփօրա (Ելից Բ 21): Եկեղեցիին իբր միասնաբար Քրիստոսի մէկ մարմին, նոյնիսկ Եփես. Բ 15ի մէջ «Նոր մարմն մը» կոչուած է: Հոս «նոր մարմն»ը անհատ հաւատացեալը չէ՝ հապա եկեղեցին՝ նկատուած իբր Քրիստոսի մարմինը Ա. Կոր. ԺԲ 12-30ի իմաստով:

Թէեւ հեթանոսներուն փրկուիլը մարգարէացուած էր (Հոով. Ժ 24 33, Ժ 19-21) և զաղտնիք մը կամ խորհուրդ մը չէր, բայց հեթանոսներուն հրեաներուն հետ մէկ մարմին ըլլալիք և «Քրիստոսով ժառանգակից ու մարմնակից և անոր խոստմունքին հազորդ ըլլալը Աւետարանով» (Եփես. Գ 6) խորհուրդ մըն էր, որ ուրիշ դարերուն մէջ մարդոց որդիներուն չերեւցաւ: Աստուած այն խորհուրդը յայտնութիւնով ցուցուց Պօղոս առաքեալին: Այս պատճառաւ է որ անոր գրութիւններուն մէջ կը գտնենք ոչ միայն եկեղեցւոյ խորհուրդին յայտնութիւնը, հապա նաև եկեղեցւոյ վարդապետութեան, դիրքին, քաղութան և ապագային վերաբերեալ ամենայն յստակ կանոնադրութիւններն ու յայտարարութիւնները:

Մեսիական թագաւորութեան երկրի վրայ հաստատուելէն առաջ զլիաւորապէս հեթանոսներէն կազմուելիք Քրիստոսի եկեղեցիին ճանաչումը խիստ հետաքրքրական է կարգալ նաեւ Գ. Առաք. ԺԵ զլիաւն մէջ երուսաղէմ տեղի ունեցած Առաքելական ժողովի ընթացքին, ուր Յակոբոսի նման հրէական ամենագորաւոր մտայնութեամբ (Գաղ. Բ 12), բայց Սուրբ Հոգիին լուսով առաջնորդուած անձ մը կ'ըսէ. «առաջ ... հեթանոսներէն ժողովուրդ ... ասկէ ետքը ... Դաւթի ինկած խորանը նորէն պիտի շինեմ» (Գ. Առ. ԺԵ 14-16): Այս հաստատմը եկեղեցւոյն

(Շարունակութիւնը տե՛ս 58րդ էջին տակը)



## ՍԻՐՈՅ ԷՋԵՐ

## Ե Թ Է'...

«Տէ՛ր, Դուն ամեն բան գիտես,  
Դուն գիտես որ ես Բեզ կը սիրեմ»:

Յովհ. 21. 7

Եթէ կեանքս ծաղիկ մ'ըլլայ՝ Տէ՛ր, կ'ուզեմ  
ձամբուդ վրայ յօժարութեամբ մը վըսեմ,  
Սիրոյդ հովէն մերկանալ լո՛ւռ, թերթ առ թերթ՝  
Որ չըլլայ թէ քարի զարնես սուրբ ոտքերդ:

Եթէ կեանքս առուակ մ'ըլլայ՝ Տէ՛ր, կ'ուզեմ  
Սահիլ հեզի՛կ, յօժարութեամբ մը վըսեմ,  
ձամբուդ մօտիկ միշտ քարքարուտ, միշտ փըշոտ՝  
Որ հոն լըլաս խոցուած ոտքերդ արիւնոտ:

Եթէ կեանքս նոճի մ'ըլլայ՝ Տէ՛ր, կ'ուզեմ  
Աշտարակուի՛լ յօժարութեամբ մը վըսեմ,  
ձամբուդ եզրին եւ շուք օրգել քու վըրայ՝  
Որ քրտնաթոր մարմինդ գոնէ հովանայ:

..

Եթէ կեանքս թռչնակ մ'ըլլայ՝ Տէ՛ր, կ'ուզեմ  
Սուրալ չորս դին յօժարութեամբ մը վըսեմ,  
Ու տաղերգել խաչուած սըրտիդ վիրաւոր՝  
Սէրը անհուն, եւ սուրբ ցաւը ահաւոր:

Եթէ կեանքս մատեան մ'ըլլայ՝ Տէ՛ր, կ'ուզեմ  
Լո՛ւռ թղթատուիլ յօժարութեամբ մի՛ վըսեմ,  
Որ ամեն մարդ էջերուս մէջ գտնէ քեզ,  
Ո՛վ մերժըւած «ԿԵՆԱՅ ԱՂԲԻԻՐ» սիրակէզ:

Եթէ կեանքս լուսաստղ մ'ըլլայ՝ Տէ՛ր, կ'ուզեմ  
Դիշերին մէջ յօժարութեամբ մը վըսեմ,  
Լո՛ւռ բոցբոցիլ, որ հոգիները թշուառ՝  
Հետեւին քեզ հեաքերուդ մէջ սըրբավառ:

Եթէ կեանքս լոկ հով մ'ըլլայ՝ Տէ՛ր, կ'ուզեմ  
Փոթորիկուիլ յօժարութեամբ մը վըսեմ,  
Եւ արծարծել ամեն մարդու սըրտին մէջ՝  
Աստուածփայլն սիրոյդ կըրակը անշէջ:

Եթէ կեանքս ամպրոպ մ'ըլլայ՝ Տէ՛ր, կ'ուզեմ  
Քամուի՛լ, քամուի՛լ յօժարութեամբ մը վըսեմ,  
Որ անպըտուղ չոր հոգիները խոսկան՝  
Արգասաբեր հողի պէս քեզ պտուղ տան:

..

Ու դեռ ո՛վ Տէ՛ր, սիրոյ հընոց սրտիս մէջ՝  
«Եթէ՛ներու բիւրբ.բիւրոց մը կայ անշէջ,  
Հրդեհ մ'է ան, որուն բոցէն յարահուն՝  
Ծընունդ կ'առնեն նորնոր կայծեր լուսօճուն:

Ու գիտես Տէ՛ր, որ «Եթէ՛ներու» բոլոր  
Կեանքի կարօտ ըզմանքներ են փառաւոր,  
Որոնց կ'ուզեմ որ թեւ տաս Գուն, քեւ եւ Գոյն՝  
Որ ճախրին միշտ շուրջը «ԵՍԻՎ» գերագոյն:

ՍԱՄՈՒԷԼ Պ.



## ԸՆՏԱՆԵԿԱՆ

## ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷԻՆ ՄԱՅՐԸ

Գ.

Բայց այդ մայրը լաւ գիտէր որ տղան միշտ չպիտի մնայ իր գրկին ու տանը մէջ, ուշ կամ կանուխ պիտի գայ օր մը երբ անիկա արքունի քին պիտի յանձնուի իբրեւ Փարաւոնի աղջկան որդին հոն Եգիպտացիի կեանք մը ապրելու համար: Տղան մինչեւ կաթէն կտրուելը միայն կրնար իր քով մնալ: Սակայն կ'երեւի թէ Յոքարէդ որոշած էր Մովսէսն ընդ միշտ պահել իբրեւ իր զաւակը, իբրեւ ճշմարիտ Իսրայէլացի մը: Կ'ուզէր զանի օրհնութիւն մ'ընել իր ժողովուրդին և այսպէս նաև ամբողջ աշխարհի: Կը ճանչնար Աստուծոյ մեծ պարգեւը որ այսպէս կրկին անգամներ եղած էր իրեն, և ուխտեց մանուկը յաւիտեանս հաւատարիմ պահել իր նախահարց Աստուծոյն և մեծցնել ճշմարիտ հաւատքի մէջ: Արդեօք Մովսէս մանուկը ո՞րչափ ատեն մնաց մայրենի տան մէջ: Որոշ չենք գիտեր. թէեւ խիստ հաւանական է որ Յոքարէդ շատ շուտ չկտրեց մանուկը կաթէն, հապա հին արեւելեան մայրերու սովորութեան համեմատ՝ զոնք մինչեւ չորս տարեկանը լրացնելը զայն դիեցուց: Այսու ամենայնիւ, ո՞րչափ կարճ պատեհութիւն մըն էր ասի իր մեծ նպատակն իրազործելու համար: Յոքարէդ զայս լաւ կը հասկնար, և այդ նեղ առիթը լաւագոյն կ'երպով օգտագործեց: Պիտի ըսէինք թէ Մովսէսին համար անգիտակից տարիք մըն էր այդ՝ երբ իր մայրը զինք անուց և կրթեց, և ո՞րչափ միայն կրնար մանուկն օգտուիլ այդ կրթութենէն: Սակայն ա՛հա այդ մատաղ

## Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — ԵԿԵՂԵՅԻՆ

(Շարունակելի 56րդ էջէն)

վերաբերեալ ամենակարեւոր հատուածներէն մին է Նոր Կտակարանի մէջ: Կրկնենք թէ եկեղեցի կը նշանակէ «կանչուածներու ժողովք», և Պենտեկոստէն սկսեալ այս եղած է եկեղեցիին դերը ամէն դարերու մէջ և ամէն եկեղեցիներու մէջ: Աւետարանը երբեք և ոչ մէկ տեղի մէջ ամենը չէ ապաշխարեցուցած, հապա, ամէն տեղէ ալ մի քանիներ զուրս կանչած և զանոնք ժողոված է միասին:

հասակին տրուած ընտանեկան կրթութեան մնայուն և անջնջելի ազդեցութիւնը:

Յոքարէդ անանկ ջերմ ու սերտ սիրով մը կ'ապած էր Մովսէսն իրեն ու ընտանիքին, որ մանուկը Փարաւոնի աղջկան տարուելէն ետքն ալ, որչափ ատեն որ Եգիպտական արքունիքը Տայանիս կը մնար, միշտ մեծ փափաքով կ'այցելէր իր ստնտուին, և իշխանուհին ալ կ'երեւի թէ յօժարութեամբ թոյլ կուտար ասոր: Եւ հարկաւ օր մը կամ հայրն ու մայրը և կամ քոյրն ու եղբայրը Մովսէսին յայտնեցին իր ծննդեան զազանիքը՝ նկարագրելով անոր իր հրաշալի ազատման պատմութիւնը, և այսպէս իրեն հասկցնելով իր ինքնութիւնն ու ազգութիւնը: Մովսէս այն ատեն իմացաւ թէ Յոքարէդ իր հարազատ մայրն էր, և մօրն ու քրոջը քաջասիրտ զոհարելութիւնն ու զորովալից հնարամտութիւնը զինք ստոյգ փճացումէ ազատելու համար, իր սիրտը կատարելապէս շահեցան դէպի այդ խոնարհ ծագումով ընտանիքը:

Յետոյ կուգայ դաստիարակութեան շրջանը: Ստեփանոս կ'ըսէ թէ «Մովսէս Եգիպտացեաց բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ» (Գործք. Ի 22): Ասի երբորդ ճգնաժամ մըն էր Յոքարէդի փափուկ սիրտը փորձելու: Իր հոգւոյն զաւակը հիմա պիտի յանձնուէր հեթանոսական տաճարի մը քուրմերուն, բազմաստուածեան ու կուսպաշտական բազմապատիկ ու հզօր ազդեցութեանց տակ դաստիարակուելու. արդեօք այդ ազդեցութեանց հետեւանօք անիկա պիտի չկորսնցնէր իր հոգեւոր հաւատքը և ազգակիցներուն հանդէպ սէրը: Կը խորհիմ թէ Մովսէսի մայրն ալ ըրած պիտի ըլլայ ինչ որ Յովհան Ոսկերեքանի մայրն Անթուսա ըրաւ: Պատանին Յովհան կ'ուզէր բարձր դաստիարակութիւն ստանալ, Լատիներէնի և օրէնսգիտութեան հետ նաեւ Յունարէնի և պերճախօսութեան մէջ կատարելագործուի: Դանք որ այդ ժամանակ Անտիոքի մէջ միակ բարձր ուսումնական հաստատութիւնն, ուր Յովհան իր փափաքածները կրնար գտնել, Լիբանոս հոկտոբրին դպրոցն էր, և այս մարդն ալ քրիստոնէութեան ամենամեծ ոխերիմ թշնամին էր: Յովհանի այրի բարեպաշտ մայրը կը վարանէր իր սիրաւուն զաւակը յանձնելու այս հեթանոս վարժապետին ձեռքը, վախնալով որ Յովհան բարոյականով պիտի ապականուէր և հաւատքը պիտի կորսնցնէր: Բայց Անտիոքի հայազգին ծերունազարդ եպիսկոպոսը Միլիտոս, խորհուրդ տուաւ Անթուսայի որ չարզիլէ պատանին իր սրտին այս օրինաւոր փափաքէն՝ եթէ չէր ուզեր



զանի առյաւելտ կորսնցնել, հապա թուլատրէ Լիբանիոսի դպրոցը յաճախելուն. միայն թէ ամէն օր առտուն կանուխ կարճ ժամ մը Ս. Գիրքէն սերտէ իր որդւոյն հետ և ծնրադիր ազօթելով՝ յանձնէ զանի Աստուծոյ Հոգւոյն առաջնորդութեան, և այսպէս աղապատանքով ու հաւատքով շրջապատած զանի՝ ղրկէ դպրոցը. ցորեկուան միջոցին ալ մի քանի անգամ կարճ պատեհութիւններ գտնէ յատկապէս իր զաւկին հոգեւոր առողջութեան ու ապահովութեան համար ազօթելու: Զայս խոստացաւ Անթուսա և հաւատարմաբար կատարեց պարտականութիւնը: Աստուած ալ պատասխանեց իր հաւատքով ազօթքներուն, որով թէև եօթը տարի մնաց Յովհաննայէ հեթանոս դպրոցին մէջ, սակայն ոչ միայն չկորսնցուց իր հաւատքն ու բարոյականը, հապա ընդհակառակն օգտուելով այդ կրթական յարկին ընծայած ազատ դաստիարակութեան միջոցներէն, Լիբանիոսէն ստացած մտաւոր գէնքերովն իսկ, ապա յաջողապէս կոտեցաւ կոապաշտութեան դէմ և քրիստոնէութիւնը պաշտպանեց: Անկից տասն և ութ դարեր առաջ Յոքարէզ ալ նոյնն ըրած պիտի ըլլայ պատանի Մովսէսին համար՝ միեւնոյն յաջող արդիւնքով:

Ըստ աւանդութեան, Մովսէսի դաստիարակուած վայրը Արեգ քաղաքի (Heliopolis) մեհենական դպրոցն էր, որ հին Եգիպտոսի զխաւոր համալսարանը կը համարուէր: Արդ, Արեգ քաղաքը շատ մօտ էր Մովսէսի ծննդավայր եղող Երրայական գաղութին, ուստի Մովսէս դպրոց ուսած տարիներուն ալ անտարակոյս պատեհութիւններ կ'ունենար իր մօրը և ընտանիքին յաճախակի այցելութիւններ տալու, ինչ որ իր մանկութեան ատեն առած տպաւորութիւնները ա'լ աւելի պիտի խորացնէր: Իսկ միւս կողմէն, Եգիպտական արքունիքէն իր երկար միջոցներով բացակայութիւնը գինք հետզհետէ պիտի ձերբազատէր պալատական ճոխութեանց և ձեւակերպութեանց գերի ըլլալէ:

Արդար ըլլալու համար սա ալ պէտք է աւելցնել թէ՛ ինչպէս կրօնապատմական հետազոտութիւնները կը ցուցնեն, կար ներքին վարդապետութիւն մը վաղեմի Եգիպտոսի կրօնական իմաստասիրութեան մէջ, որուն համեմատ քրմական բարձր դասակարգը զրեթէ միաստուածեան հաւատք մը կը մշակէր, հակառակ ընդհանուր ժողովուրդին մէջ տիրապետող կոապաշտութեան ու կոշտ անասնապաշտութեան: Կան ազօթքներ ալ կրօնական երգեր, ուր երկրպագուն մէկ աստ-

ուած միայն ընտրած է իրրեւ իր պաշտամունքին առարկան, զրեթէ մոռնալով կամ անտես ընելով միւս անհամար աստուածութիւնները: Ասոր նոր բառով մը ընտրաստուածութիւն (henotheism) կ'ըսենք, որ յաճախ անոր հետեւողին դէպի միաստուածութիւն տանող բնական ուղի մը կ'ըլլար: Պէտք է մտաբերենք որ Իսրայէլի ժողովուրդին անապատային ճամբորդութեանց դէպի վերջերը Եգիպտոսի վրայ իշխող Ամենոփիս Դ. կամ Ախնամուն «հերետիկոս» փարաւունը — այս տեսակ միաստուածութիւն մ'ընդունելու կը բռնադատէր Եգիպտոսի ժողովուրդը, և թէ իրեն մօտաւոր մէկ յաջորդը, Թուֆանիսամէն, Թադակապ իմաստասէր մը, քաղաքական ասպարէզին մէջ խաղաղասիրական (pacifistic) ընթացքի հօր ջատագով մըն էր: Այսպէս ուրեմն, Մովսէս Արեգ քաղաքի մեհենական ուսումնարանին մէջ կրնար ոչ միայն պահպանել իր միաստուածեան հաւատքը, հապա նաև զայն խորացնել ու լայնցնել՝ իր միտքը սնուցանելով Եգիպտական դաստիարակութեան ընձեռած բազմակողմանի վերացական ու դրական օգտակար ծանօթութիւններով:

Ս. Գիրքը կ'ըսէ թէ «հաւատքով Մովսէս, երբ մեծցաւ, չընդունեց փարաւունի աղջկան որդի ըսուիլ. քանզի աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղքին ժամանակաւոր դուարձութիւնը վայելիլ» (Եբր. ԺԱ. 24, 25): Ստուգիւ ո'րչափ զօրաւոր պէտք էր ըլլար Յոքարէզի իր երախային սրտին ու մտքին մէջ կանուխէն ներարկած այդ հաւատքն առ ճշմարիտ Աստուած և այդ սէրը իր խոնարհ ընտանիքին ու գերութեան տակ հեծող ժողովուրդին հանդէպ, որ երբ վճռական որոշման վայրկեանը հնչեց, Մովսէս կրցաւ անվարան մերժել Եգիպտոսի դանձերուն ժառանգորդ ըլլալը և աւելի մեծ հարստութիւն սեպել, իր նախահայրերուն Աստուծոյ խոստմունքը օր մը իր ժողովուրդին վրայ կատարուած տեսնելու յուսով, նախատինք կրել ճշմարտութեան համար. (Անդ. հմր. 26):

Այսպէս կ'արժէ Յոքարէզի նկարագիրն ու շարժումները սերտել՝ իրրեւ տիպար մայր մը: Կարելի է անկէ զործնական թելադրութիւններ բերել, նախ, արդէն մայր եղողներուն: Փարաւունի աղջկան առ Յոքարէզ ուղղուած խօսքը — «Ա՛ռ այս մանուկը, ինձի համար մեծցուր» — Աստուած կը խօսի ամեն մէկ մօր: Այնպէս օգտակար կերպով գործածէ ձեռքը եղող կարճ պատեհութիւնը և այնպէս հոգեւոր ազդեցութիւն մը



բանեցու՛ր քու տակաւին զրեթէ անգիտակից տարիքին մէջ գտնուող զաւակիդ, որ մատաղ հասակէն իրեն տրուած այդ կրթութեան տպաւորութիւնը մնայուն ըլլայ և կարենայ որդիդ կամ աղջիկդ ապահով անցընել երիտասարդական կեանքի բազմատեսակ փորձութիւններուն մէջէն, և զանի հաւատքի հերոս մ'ընել Մէվսէսի նման — երկրորդ, հոս թելադրութիւններ կան անոնց որ օր մը մայրեր պիտի ըլլան: Շատ պատուաւոր և մեծամեծ արտօնութիւններով լեցուն պաշտօն մըն է մայրութիւնը: Ազգին բախտը, Աստուծոյ թագաւորութեան ու եկեղեցիին ապագան իսկ մայրերու ձեռքն է: Ի՛նչպէս պէտք է մեր օրիորդներուն պատրաստուիլ այդ սուրբ պաշտօնին: Նմանելով Մովսէսի մօրը Յոքաբէղի, Սամուէլի մօրը Աննայի, Յիսուսի մօրը Մարիամի, Տիմոթէոսի մօրն ու մեծ մօրը Եւնիկէի ու Լաւոդիայի: Նախ իրենք ստանալով և ունենալով այդ բարի յատկութիւնները, զորոնք կ'ուզեն օր մը տեսնել իրենց սերունդին վրայ: Որպէսզի Մովսէսի, Սամուէլի, Տիմոթէոսի և նման երիտասարդներուն համար զրուածը իրենց զաւակներուն համար ալ ճշմարիտ ըլլայ, պէտք է որ նախ իրենք հաւատք ունեցող մայրեր ըլլան: Տիպար մայրերու օրինակներ ունինք նաեւ եկեղեցական պատմութիւնէն՝ Ս. Յովհան Ոսկերեւանի մայրն Անթուսա, զոր վերեւ յիշեցինք, Ս. Օգոստինոսի մայրը Մոնիքա, Մարգին Լուսերի մայրը, Ուէյլներուն մայրը, եւն., արտաքին պատմութիւնէն՝ Աբրահամ Լինքլնի մայրն ու խորթ մայրը, Ճօզէֆ Կարֆիլտի մայրը և ուրիշ շատեր, նոյն իսկ մեր ազգային պատմութիւնէն՝ Մեծն Վահան Մամիկոնեանի մայրը Ջուիկ, Եսայի Ա. կաթողիկոսին որբուարի մայրը, և յետոյ՝ Խոսրովանոյշ թագուհին և սրիշ շատ շատեր: Ասոնց կեանքն ու նկարագիրները պէտք է որ մեր օրիորդներն ուշադիր ու գորգորոտ ուսումնասիրութեան առարկայ ընեն: — Եւ վերջապէս, հոս թելադրութիւն մը կայ նաեւ այն երիտասարդներուն, որ պիտի ամուսնանան: Ամրամ գտաւ իրեն ամենայնարմար կենակից մը, Յոքաբէղը, որ մայրն եղաւ նշանաւոր զաւակներու, որով Ամրամի իրեն անունն ալ անմահացուց: Մեր երիտասարդներն ալ պէտք է որ ճշմարիտ մայրեր ըլլալու աղջիկներ գտնեն և այնպէս ամուսնանան: «Առաքինի կինը ո՞վ կրնայ գտնել», կը հարցնէ Առակաց զիւքը: Մեր այլ մարդիկը մոռնալու չեն որ առաքինի կին ունենալու համար պէտք է որ նախ իրենք առաքինի մարդիկ ըլլան:

Վեր. Ե. ՔԱՍՏՈՒՆԻ



## ՊԱՏԱՆԵԱՅ

ՃՕՐՃ ՄԻՒԼԸՐ

ԱՂՕԹԸ

Աղօթքի վրայ քանի մը բառ պիտի խօսիմ: Մեր մէջ աղէկ բան մը չունինք, և կրնանք Աստուծոյ հաճոյ ըլլալ, այնքան որ Ան մեզի առիթ կուտայ, ուստի իր կամքը այն է, որ մենք ամէն բան իրմէ առնենք աղօթքով: Մեր Փրկիչը մեզի թանկագին օրինակ մըն է այս կէտին մէջ: Ան լման զիշերներ կ'անցնէր աղօթքի մէջ: Մեր հին մարդը արմատապէս չ'անյայտանար երբ մենք նորէն կը ծնանինք. մենք միշտ պէտք ունինք Տէրոջը օգնութեան, ոչ միայն մեծ պատեհութիւններու առթիւ, երբ մեր տունը կ'այրի կամ երբ մեր կինը իր մահուան անկողնին մէջ է, այլ պզտիկ բաներու մէջ ալ:

Աստուծոյ արդէն զիտնանք աղօթքի նիւթ ընել ամէն բան, այսպէս շարունակել բոլոր օրը: Գրիստոնեայ տիկին մը ինծի կը պատմէր վերջերս, թէ ինք այս նիւթին վրայ քարոզելու լսած էր ասկէ 35 տարի առաջ. ևս ըսած էի այդ քարոզին մէջ թէ աղօթելու ենք պզտիկ բաներուն համար ալ, օրինակ, եթէ ընդունէինք ծրար մը, որուն չուանը չենք կրնար քակել, մենք կրնանք Անկէ խնդրել որ մեզի օգնէ: Թէպէտեւ ևս այս ըսածներս մոռցած էի, բայց տիկինը զանոնք մոռցած չէր և անոնցմով զօրացած էր:

Ուստի, իմ սիրելի բարեկամներս, ձեզի կը կրկնեմ թէ աղօթքի համար նիւթ մը չկայ որ շատ պզտիկ ըլլայ: Մեր առօրեայ կեանքին ամենապարզ բաներուն համար աղօթենք և Յիսուս մեզի պիտի օգնէ: Ես ամենափոքր զործերուն համար կ'աղօթեմ և յաճախ առտուն ննջասենեակէս դուրս չելած, արդէն աղօթքներու երկու երեք պատասխաններ կ'ունենամ: Երիտասարդ քրիստոնեաներ, որ հաւատքի կեանքին մէջ կը մտնէք, սորվեցէք մանկական հաւատքով մը Աստուծոյ ուսման ամէն բանի համար: Վարուեցէք Տէրոջը հետ որպէս ձեր անձնական բարեկամը, ձեր կարող բարեկամը, որ կը փափաքի ձեզի օգնել ամէն բանի մէջ: Ի՛նչ օրհնութիւն, երբ Անոր բազուկներուն մէջ կը դրուինք ամբողջ օրը:

Հաւատացեալին կեանքը կը բաղկանայ շատ



մը պղտիկ բաներէ: Ամէն մէկ օր մեզի պղտիկ փորձութիւններ կը բերէ, և եթէ մենք ջանանք զանոնք հեռացնել մեր ուժովը և մեր անձովը, շուտ մը պիտի պարտուինք, բայց եթէ ամէն բան Աստուծոյ ձգինք, պիտի օգտուինք Անկէ և մեր ճամբան պիտի լուսաւորուի և մեր կեանքը երջանիկ կեանք մը պիտի ըլլայ:

Թրգմ. ֆր. ԼՈՒՏԵՐ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

## ԱՆՈՆՑ ՈՐ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՆ

Տէրը այսպէս կ'ըսէ, «Այս հեղեղատը փոս փոս ըրէք, քանզի Տէրը այսպէս կ'ըսէ, հով պիտի չտեսնէք, և անձրեւ պիտի չտեսնէք. բայց այս հեղեղատը ջրով պիտի լեցուի, և պիտի խմէք դուք և ձեր հօտերը»... (Դ. Թագ. 3. 16-17):

Մարդկօրէն խորհելով՝ ասիկա պարզապէս անկարելիութիւն մըն է, բայց Աստուծոյ համար բնաւ բան մը դժուար կամ անկարելի չէ:

Առանց ունէ ձայնի և առանց ունէ նշանի մը, երեւութապէս գոյութիւն չունեցող աներեւոյթ աղբիւրներէն՝ հեղեղները առատաւարով յորդեցին մէկ գիշերուան մը միջոցին, և երբ արշալոյսը երեւցաւ, բոլոր փոսերն ալ արդէն ջուրերով լեցուած էին, ապակիի նման ցոլացնելով արեւուն ճառագայթները դէպի Եդովմի կարմրադոյն բլուրները, որոնց դէմէն կ'ելլէր արեգակը:

Մեր թերահաւատութիւնը շարունակ արտաքին նշաններ կ'ուզէ տեսնել: Շատ մը մարդոց կրօնքը մեծ մասամբ կը բաղկանայ զգացումներէ, որոնք միայն կը գոհանան, երբ արտաքին նշաններ կամ յայտնութիւններ տեսնեն, սակայն հաւատքի ամենամեծ յաղթութիւնը, խաղաղ և հանդարտ ապրիլն է, հաստատ գիտնալով թէ՛ Աստուած է որ կը կենայ կանգնած, Կարմիր ծովուն անկարելիութեան առջեւը, և մտիկ ընել Տէրը, որ կը յորդորէ զմեզ դէպի առաջ քալել մեր ազատութիւնը և փրկութիւնը մեզի ցուցնել տալու համար:

Մենք ինչ չափով որ մեր ոտքերը կը դնենք այս անծանօթ գետնին վրայ, թէ և վտանգը իրական և անխուսափելի ալ ըլլայ, նոյնքան և աւելի որոշ պիտի տեսնենք ճեղքուած ծով մը, և ցամաք ու չոր ճամբայ մը բացուած ու ընդարձակուած մեր առջեւը:

Եթէ մենք տեսնէինք Տէրովը հրաշքները, օրինակի համար բնական բժշկութիւն մը կամ հրաշալի ազատութիւն մը, անշուշտ ասիկա

շատ աւելի տպաւորիչ պիտի ըլլար մեզի, և խաղաղ կերպը հաւատալու համար, որով խնդիրը կը լմնար: Բայց ասիկայ հաւատքի բնական վիճակին բացակայութիւնն է. մեր զգացողական վիճակը անօգուտ է մեզի և անզօր և այսպիսի մեծ ու Ամենակարող Աստուծոյ մը առջեւ, որուն համար այնքան դիւրին է լեցնել մեր բոլոր պէտքերը, նոյնիսկ եթէ անոնք անկարելիութիւններ ալ ըլլան մեզի համար, այդ զգացողական վիճակով ամենափոքր օգնութիւն մ'իսկ պիտի չկրնանք ընդունիլ:

Հաւատքի կանոնը չէ՛ հարցնել ինչո՞ւ կամ ի՞նչպէս, հապա միայն պէտք է հնազանդիլ: Նախ փոսերը փորուելու են ու վերջը ջուրը պիտի դայ և լեցուի աներեւոյթ աղբիւրէն:

Հաւատքի ինչպիսի՞ մեծ դաս մը մեզի համար:

Կը փափաքի՞նք հոգեւոր օրհնութիւն մը ընդունիլ, բանաւք ճեղք մը և Աստուած զայն պիտի լեցնէ: Եւ յաճախ այնպիսի տեղերէ և այնպիսի կերպերով, որոնց բոլորովին անտեղեակ ենք:

Ո՛հ թէ, մեր հաւատքն ալ կ'ընար սպասել Աստուծոյ, նոյնիսկ առանց տեսնելու ո՛չ հով և ո՛չ անձրեւ, հրաշքները պիտի գործէին շարունակ մեր կեանքին մէջ:

«La Bonne Revue»-էն

Գ. ՊԱՐՍԱՄԵԱՆ



ՄԱՆԿԱՆՑ

## ՍԻՐԵԼ ԵՒ ՍԻՐՈՒԻԼ

Մայր, ըսաւ Արտաշ իր մօրը, զարմանալի է որ մեր տան բոլոր թռչունները կը սիրեն մեր հայրիկը:

— Իրա՞ւ սիրելիս, ա՛լ ով կը սիրէ հայրիկը:

— Ա՛հ, դուն ալ, ես ալ, բայց մեր զայն սիրելը բնաւ արտաքոյ կարգի բան մը չէ, քանզի մենք զինքը աւելի լաւ կը ճանչնանք քան թէ թռչունները:

— Ուրեմն ուրկէ՞ հասկցար թէ թռչունները կը սիրեն հայրիկը:

— Մայր, միայն այս պղտիկ թռչունները չեն



որ մեր հայրիկը կը սիրեն, հապա բոլոր ընտանի կենդանիները: Մէտօր աշխարհի ուրախութիւնով մը կը հաչէ երբ զայն կը տեսնէ և կատուն ինչպիսի քնքուշութիւնով մը կուգայ իր պոչը քսելու հայրիկին սրունքներուն, նոյնիսկ մեր քովը մարգագետինն վրայ անոր կը հետեւի, երբ զայն կը տեսնէ հոն, և անցեալ օրը տեսայ որ ձեռքը կը լզէր: Ինչո՞ւ համար այս բոլոր կենդանիները հայրիկը կը սիրեն:

— Խորհէ հեղ մը Արտաշ:

Պահ մը խորհելէ յետոյ տղեկը պատասխանեց. «Կը խորհի՞մ թէ, սրովհետեւ հայրիկը զանոնք կը սիրէ, անիկա կատունին միշտ կաթ կուտայ, շնիկին ոսկոր և անուշ բաներ, կովին քով երբ կ'երթայ, սիրով կը խօսի անոր, և թռչուններուն երբ կեր կուտայ, անոնք կը տեսնեն իրեն սէրը և կը մօտենան, նոյնիսկ իր ձեռքէն ուտելու հատիկները: Օ, ես ալ շատ կը փափաքէի անոնցմէ նոյնքան սիրուիլ ինչպէս հայրիկը»:

— Դժուար չէ այդ Արտաշ պատասխանեց մայրը. դուն սիրէ զանոնք, քաղցրութեամբ խօսէ անոնց հետ, քնքուշութիւնով շոյէ շունը, փայտը ձեռքդ մի՛ առնէր կովը ձեռելու, քար մի՛ նետեր պզտիկ թռչուններուն, և պիտի տեսնես որ անոնք քեզ պիտի սիրեն:

Այս դասը գիւղացի տղու մը կ'ուտար իր մայրը որ նոյնքան արժէք կը ներկայացնէ ձեզի մեծ քաղաքներու մէջ բնակողներուդ:

Նախ, սորվեցէք բոլոր կենդանիներուն հետ ազնուութեամբ վարուիլ, սակայն նոյնքան և աւելի կարեւոր է նկատի առնել ձեր յարաբերութիւնը և վարմունքը ձեզի նմաններու հետ, ձեր քոյրերուն ու եղբայրներուն, ընկերներուն ու բարեկամներուն: Դուք շատ անգամ կը դանդաւորեք թէ այսինչը ձեզի ծուռ կը նայի կամ այնինչ ընկերնիդ ձեզի խիստ պատասխանեց, միւսը ձեր վրայ խնդաց, զձեզ ծաղրեց: Կամ կը մտածէք թէ ձեր զաւրնկերը ձեզի հանդէպ համակրական արտայայտութիւն չունեցաւ ձեր ցաւին մէջ, ձեր եղբայրը միշտ զձեզ կը նեղէ, զձեզ անհանդիստ կ'ընէ: Սակայն, հարցում մը: Դո՞ւք զանոնք ամենքն ալ կը սիրէ՞ք, զանոնք բոլոր սրտով կը սիրէ՞ք: Դուք անձամբ անոնց հանդէպ սիրով եղա՞՞ծ էք, անոնց նեղութեանց ատեն զանոնք հանգչեցուցած, մխիթարա՞՞ծ էք, անոնց հանդէպ այնքան համակրալիք, օժանդակող և յօժարակամ ցոյց տուա՞՞ծ էք ինքզինքնիդ, ի՞նչ որ անոնցմէ կ'ակնկալէք: Կամ

կ'սպասէք որ առաջ անո՞նք սկսին, առաջ անո՞նք լաւ ըլլան և յետո՞յ դուք:

Վանեցէ՛ք այս եռասիրական զգացումները ձեր սրտէն. Յիսուսի նմանեցէք, Անոր որ ամենը սիրեց, ատոր համար զինքը լսողները իր սիրոյ պատգամէն կ'ազդուէին, չարեր կ'ուզային Անոր քով և փոխուած սրտով կը վերադառնային: Անիկա մեր մէջ զրաւ պատուիրան մը — Մէկգմէկ սիրել:

Արտաշէս հասկցաւ որ կենդանիներուն զինքը սիրելէն առաջ պէտք էր ինք զանոնք սիրեր:

Յիսուս զմեզ սիրեց, մենք զինքը զեռ չսիրած և այդ սէրն է որ մեր մէջ արձագանգ գտած է զինքը սիրելու. այս սէրը արծարծենք և սիրենք ամէնը, ծառայէնք ամենուն առանց ակնկալութեան ինչպէս Յիսուս ըրաւ, այն ատեն ամենուն սիրելի պիտի ըլլանք մենք ալ:

\*\*\*

## ԱՆՎԱԽ ԵՂԻՐ ՆԱՅԷ՝ ՓՐԿԶԻՆ

(Մասթ. ԺԴ 30)

Մ'րկայոյց ծովն ու հովեր

Ամպրոպ կայծակ շանթ երկինքին,

Թէ՛ քեզ պատեն գոռ ալիքներ

Անվա՛խ եղիւր, նայէ՛ Փրկչին:

Փորձութիւններ բիւր անհամար

Տանջանք, վիշտ, ցաւ այս աշխարհին...

Շուրջը դառնայ սատանան գուր,

Անվա՛խ եղիւր, նայէ՛ Փրկչին:

Անգութ մահն ալ դաժան զէմքով

Սուր գերանդը բռնած ձեռքին,

Երբ զա՛յ կանգնի սնարիդ քով՝

Մի՛ զարհուրիր, նայէ՛ Փրկչին:

Նայէ՛ Փրկչին կարօտավատ

Ուրախութեան, նեղ ժամերուդ,

Զի Նա կեանք է, Արեւ անմար,

Քաջ առաջնորդ խաւար ճամբուդ:

(Մամլւթէյն)

ՃՕՐՃ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆՆ ԸՆՈՂ ՀԱՄԱՐ ՄԷ (\*)

Ձանք ըրէ քու անձդ ընտիր ցուցնել  
Աստուծոյ առջեւ, այնպիսի բանւոր մը  
ըլլալով, որ պիտի չամչնայ ճշմարտու-  
թեան խօսքը շիտակ բացատրելով:  
Բ. Տիմ. Բ 15

Ամերիկայի մէկ քաղաքին մէջ արձակուրդս  
կ'անցնէի ընկերակցութեամբ երիտասարդի մը,  
որու հետ յարմարած էինք Բ. Տիմ. Բ. 15-ը իբրեւ  
նշանաբան որդեգրել, այսինքն, բոլոր տարուայ  
ընթացքին պիտի փորձէինք վարքերնիս ուղղել  
զրուածքին համաձայն: Մեր սենեակները հա-  
ղորդակցութեան մէջ էին դուռով մը, զոր բաց  
կը ձգէինք գիշերները: Ննջելու մեկնած միջոց-  
նիս՝ փոխանակ «գիշեր բարի» լսելու՝ սովորու-  
թիւն ըրինք ըսել «երկրորդ Տիմոթէոս երկու տաս-  
նը հինգ», և ան որ կանուխ կ'ելլէր առտուն,  
միւսը կ'արթնցնէր ըսելով Բ. Տիմ. Բ 15:

Երբ լինցաւ մեր արձակուրդը, հակառակ մեզ  
միացնող սիրալի բարեկամութեան, պէտք եղաւ  
բաժնուիլ իրարմէ. ան իր կողմը ու ես իմինս  
մեկնեցանք Տէրոջը գործին համար:

Բաժանման պահուն բարեկամիս ընկերացայ  
ղէպի կայարան, ու երբ շոգեկառքը շարժեցաւ,  
կառարածին ետեւը կեցած՝ բարեկամս պոռաց  
ինձ, «Բ. Տիմ. Բ 15», և ինքս պատասխանեցի  
«Բ. Տիմ. Բ 15»:

Շոգեկառքը կը մեկնէր. «Բ. Տիմ. Բ 15» պո-  
ռացի և լսեցի Բ. Տիմ. Բ 15: Շոգեկառքին կայա-  
րանէն զատուելու պահուն բոլոր ուժովս Բ. Տիմ.  
Բ 15 պոռացի և շատ մեղմօրէն կրցայ իմանալ  
պատասխանը «Բ. Տիմ. Բ 15»: Անգամ մը եւս  
«Բ. Տիմ. Բ 15», բայց այլեւս ոչինչ իմացայ,  
միայն կը տեսնէի որ ան կը շարժէր իր թաշկի-  
նակը:

Անոնք որ կը գտնուէին հոն, պէտք է խոր-

հէին թէ մենք քիչ մը խենթ ենք, մէկս կառա-  
փէն ու միւսը շոգեկառքէն իրարու «Բ. Տիմ. Բ  
15» պոռալով:

Այս ամբողջ տարին այս նշանաբանին կառ-  
չած մնացինք միասին: Երբ նամակ մը կը գրէ-  
ինք, պահարանին և նոյնիսկ նամակին անկիւնը  
կը նշանակէինք «Բ. Տիմ. Բ 15»: Բարեկամնե-  
րէն շատերը նոյնը կ'ընէին իրենց նամակներուն  
երբ կը գրէին ինծի:

Տասներկու ամիս վերջ, կրկին նոյն քաղաքը  
կը գտնուէի երիտասարդաց համար ժողովներ  
ընելով, ու կը խօսէի նշանաբան ունենալու կա-  
րեւորութեան վրայ: Երբ խնդրոյ առարկայ հա-  
մարը կը յանձնարարէի իրենց, երիտասարդ մը  
միջամտեց խօսքս.

— Ինչքան ուրախ եմ որ Պր. Աղէքսանդր  
ամբողջ տարուան համար նշանաբան Բ. Տիմ. Բ  
15-ը կ'ընտրէ, ըսաւ:

— Ինչու, հարցուցի:

— Ահա՛, պատասխանեց, երբ տասներկու  
ամիս առաջ բարեկամներու ընկերանալու համար  
կայարան կը գտնուէի, լսեցի մէկուն բոլոր ուժով  
«Բ. Տիմ. Բ 15» պոռալով մարդու մը որ շոգեկառ-  
քին մէջ էր ու կը պատասխանէր «Բ. Տիմ. Բ 15»:  
Ինքնիրենս կը մտածէի թէ ինչ կրնայ ըլլալ Բ.  
Տիմ. Բ 15-ը: Տուն գալով փնտռեցի Աստուծա-  
շունչին մէջ: Համարին առաջին խօսքերը ուշա-  
գրաւեցին զիս՝ «Ձանք ըրէ քու անձդ ընտիր  
ցուցնել Աստուծոյ առջեւ»: Քրիստոնեայ չէի այդ  
պարագային: Շարունակեցի կարգալ, «այնպիսի  
բանւոր մ'ըլլալով որ պիտի չամչնայ ճշմարտու-  
թեան խօսքը շիտակ բացատրելով»: Ինքնաբե-  
րաբար ծունկ կրկնեցի և մեղքերու թողութիւն  
և նաեւ օղնութիւն խնդրեցի իր առջեւ ընտիր  
ներկայանալու: Ու օրհնեալ ըլլայ Տէրը որ կա-  
տարեց զայս:

Այս երիտասարդին նստելէն առաջ ուրիշ մը  
արդէն ոտքի էր որ ըսաւ.

— Շնորհակալ եմ Աստուծոյ որ Պր. Աղէք-  
սանդր այս համարը նշանաբան ըրաւ: Առաջին  
անգամն է որ կը տեսնեմ զինք, բայց առաջին  
կիրակին որ այս քաղաքն էի, այն մարդը որ  
հիմայ վկայեց, մօտեցաւ ինծի ու խօսեցաւ Քրիս-  
տոսի վրայով: Ան փրկուած էր Պր. Աղէքսանդրին  
Բ. Տիմ. Բ 15 պոռալը լսելուն պատճառաւ, եւ  
զայս առիթ եղաւ զիս ալ փրկութեան առաջ-  
նորդելու:

Ատեն մը վերջ, Աւստրալիա մեկնեցայ: Մալ-  
պուրնի վերջին ժողովին մէջ ժողովուրդը բաժ-  
նուիլ չուզելով՝ շարունակաբար կ'երգէինք: Այդ

(\*) Հետեւեալը գրութիւնն է Mr. Alexandre ի, որ  
Dr. Torrey ի երգիչն էր եւ հեղինակը մեր գեղեցկագոյն  
երգերէն Հոգ. Երգարանի 415-րդ երգին: Սոյն պատմու-  
թիւնը մեզի ալ պատմուեցաւ 1909-ին Վեր. Եղոյեանի  
կողմէ, իր եկեղեցւոյն երիտասարդաց: Այն օրէն մեր ալ  
նշանաբանը եղաւ երկուր տարիներ:

Կը հրատարակեմք զայն, նորէն հրահարելու Բ. Տիմ.  
Բ 15-ի զօրաւոր ազդեցութիւնը մեր սրտերուն մէջ:



պահուն առիթով մը ըսի իրենց «ուրեմն մտիկ ըրէք համարի մը պատմութիւնը», և պատմեցի վերոգրեալը:

Յետոյ առաջարկեցի թէ ամեն անոնք որ կ'ուզեն Բ. Տիմ. Բ 15ը տարուան համար նշանաբան ունենալ՝ զայն կրկնեն ինծի հետ: Ասոր վրայ ութ հազարնոց բազմութիւնը միասնաբար «Երկրորդ-Տիմ-թէ-ոս-երկու-տասնը հինգ ազադակեց, զարմանալի տպաւորութիւն մը ձգելով ժողովին ամբողջութեան վրայ:

Մինչ ես կը պատմէի պատմութիւնը, թղթակից մը, զոր նստած էր առջեւ, զրեց ու իր թերթին մէջ հրատարակեց: Թերթը գնաց Անգլիա եւ Christian Herald արտատպեց պատմութիւնը: Բարի տիկին մը Christian Heraldը կալկաթա գինուորի մը զրկեց, ասիկա կարգաց պատմութիւնը ու իր սիրտը Աստուծոյ տուաւ:

Ահա թէ ինչ պատեհութեամբ իմացայ այն արդիւնքը: Երբ Հնդկաստանէ կ'անցնէր զինքն անձամբ տեսայ, որ Կալկաթայի մէջ եկաւ ինքն իսկ ինծի ու ըսաւ.

— Ճիշդ է թէ դուք էք որ այս պատմութիւնը Մեկպուրնի մէջ պատմած էք: Իմացէք ուրեմն, ըսաւ, թէ այդ միջոցաւ է որ ես հիմա քրիստոնեայ մըն եմ:

Այդ պատմութիւնը 27,000 քիլոմէթր ճամբորդած և զինուոր մը Քրիստոսի բերած էր:

Պատմութեան աւստրալիական թերթին մէջ տպուելէն յետոյ, այլեւս յանձնարարութեան պէտքութիւն չունէինք, երբ ժողովներ սարքելու համար կը ճամբորդէինք: Անմիջապէս որ շոգեկառքէն կ'իջնէինք, մեր ամենեւին չճանչցած մարդիկը մեզ կը բարեւէին Բ. Տիմ. Բ 15ով: Մեկնեցանք թաամանիա՝ Մեր ժամանումին, ծովափին վրայ բազմութիւն մը կը կենար, որոնք բոլորովին օտարներ էին մեզ, բայց բարձրահասակ մարդ մը, նաւուն ծովեզր տեղաւորուելու պահուն բերանը տարաւ ձեռքը ու պօռաց «Բ. Տիմ. Բ 15». անմիջապէս ինքզինքնիս մեր յարկին տակ զգացինք:

Միեւնոյնը պատահեցաւ երբ Անգլիա հասանք: Հազարաւոր նամակներ բռնադի տրուած էին պահարանին վրայ Բ. Տիմ. Բ 15 դրուած: Եկեղեցիի մը սարկաւազը իր հովիւին խօսեցաւ, հովիւը եկաւ գտաւ զիս երբ Լոնտոնի մէջ ժողովներ կ'ընէինք ու ըսաւ ինձ. «Իմ բոլոր համայնքս տարուան համար նշանաբան ընտրեցինք Բ. Տիմ. Բ 15ը»:

Քէյմպրիճ համալսարանէն ուսանողներու խումբ մը զէպի Օքսֆորտ մեկնեցաւ ժողովներու մասնակցելու համար: Խնդրոյ առարկայ համարը

իրենց նշանաբանն էր, և անոնք չորս մէթրնոց կտաւով Բ. Տիմ. Բ 15ը վրան զծած խոշոր զրհրով՝ ազգագիր մը շինեցին ու զայն տեղաւորեցին կառաքածնին զրսիդին ճամբորդութեան ատեն: Այս կերպով համարը կարգացուեցաւ հազարաւորներու կողմէ:

Աւելի վերջը, այս համարին պատմութիւնը հրատարակուեցաւ Լոնտոնի թերթերէն մէկէն: Թերթը ձեռքն անցաւ Տանիմարքայի արքունիքին արարողութեանց գլխաւորին, մեծ ազդեցութեան տէր մարդու մը: Կարգաց պատմութիւնը ու զարմացաւ համարին կատարած համաշխարհային դերին: Քանի մը օրերէն ան Տանիմարքայի ազնուականաց մէկ ժողովին պիտի նախագահէր, ու որոշեց որ պատմութիւնը պատմէ անոնց: Պատմութիւնը այնքան ժողովրդական դարձաւ, որ երկար ատեն Բ. Տիմ. Բ 15ը ընտանեկան արտայայտութիւն մը եղաւ Տանիմարքայի մէջ:

Ամբողջ տասներկու տարի այս համարը գործածեցի իբրեւ մէկ մասը իմ ստորագրութեանս: 1912ին երբ վերջին անգամ Աւստրալիա էի, երիտասարդ մը, որ Կապոյտ Լեռներէն Սիտի եկած էր միսիոնարութեան, պատմեց ինձ թէ հոգեւոր հանդէսներու մէջ իմ զանազան յօդուածներս կարգալով նշմարած է որ քիչ մը արտակարգ է ստորագրութիւնս: Այս կերպով ան կը մղուի ուսումնասիրել համարը, որ իրեն Աւստրալիոյ քարոզելուն պատճառը կ'ըլլայ:

Ch.-M. Alexander

Անտարակոյս, այս վկայութիւնը հաւատացեալը պիտի հիացնէ համարի մը գործած մեծ և թանկագին գործունէութեան վրայ: Այս պատեհութիւնը արդարեւ մեզ քաջալերելով առաւել կորով կը ներշնչէ, որ Ս. Հոգիին գործակից ըլլանք Աստուծոյ խօսքին տարածմանը, նոյն իսկ մէկ համարի մը:

Նաեւ այս վկայութեան համեմատ որքան գործնական է մարգարէութեան խօսքը որ մեր յենարանն է միշտ: Ինչպէս անձրեւը ու ձիւնը երկինքէն կ'իջնէ եւ հոն չղաճնար, հապա երկրը կ'ոռոգէ ու զանիկա պտղաբեր եւ արգասաւոր կ'ընէ, ու ցանողին հունաւ և ուտողին հաց կուտայ, իմ բերնէս ելած խօսքն ալ... ինծի պարապ պիտի չղաճնայ, հապա իմ կամքս պիտի կատարէ, ու յաջողութեամբ ի գործ դնէ այն բանը՝ որու համար զանիկա զրկեցի. Ես. ԾԵ 10, 11:

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille



# ՕՐՀՆԷ ՏԷՐԸ ՈՎ ԻՄ ԱՆՁՍ

(Դերմաներէնէ՝ Յ. Ն. Ղ.)

1. Օրհնէ, օրհնէ, ո՛վ անձն իմ, փառաց Տէրն և թագաւոր  
Բանդի այս է ճշմարիտ պարտիք իմ եւ բանաւոր:  
Ո՛հ, ժողովուինք: Տաւիդ քրնար արթըննա՛ն  
Եւ ձայնեն երգեր զովութեան:

2. Օրհնէ դու զՍ.յն որ տիեզերքն փառքով կառավարէ,  
Նաեւ զքեզ արծիւի թեւոց վրայ միշտ կը կրէ,  
Եւ ամէն բան ինք շնորհքովն կը խնամէ  
Բարիի գործակից կ'ընէ:

3. Օրհնէ զՏէրն որ ներկան քու՝ յայտնի ձեռքով կ'օրհնէ,  
Որ երկինքէն բարիքներն իր քու վրադ կը տեղացնէ:  
Ո՛հ, մի մոռնար թէ ինք մեծ եւ հըզօր է,  
Բայց քեզ սիրով զիմաւորէ:

4. Օրհնէ զՏէրն ո՛վ անձն իմ, եւ ինչ որ ներսիդիս է  
Իր սուրբ անուն: Բանդինա քու կեանքիդ միակ լոյսն է:  
Այդ լոյսին տակ ընես դու գործերդ ամէն,  
Մ'ինչ՝ հայրենիքդ հասնիս: Ամէն:

Փետրուարի թիւին մէջ խնդրած էինք մեր սիրելի «Բանքեր»-ի  
ընտանիքէն ջանք մը աւելի ընել, որպէս զի այս տարի 200 օրինակ  
աւելի տպուած «Բանքեր»ները տեղաւորուին: Շնորհակալ ենք  
անոնցմէ, որոնք այս մասին մեզի աջակից եղան: Դեռ հարիւր նոր  
բաժանորդներու պէտք ունինք: Որո՞նք կ'ուզեն աջակցիլ մեզի  
կանխաւ շնորհակալութիւն:

Յ. Ն. Ղ.



Լ. Ա. — Գառնուկին անգին սիրովը սիրելի եղբայրս, Գու և «Բանքեր»ի ընտանիքին, հոգեւոր օրհնութիւններով բարի և բարգաւաճ նոր տարի, ու երջանիկ օրեր կը մաղթենք: Տէրը տայ որ նոր Տարւոյս մէջ ձեր ծառայութիւնը բազում հոգիներու փրկութեան միւխթարութիւնը վաստկի, և Ձեզ իր ծառայութեանը մէջ դնող Տէրը բոլորովին գոհ ըլլայ Ձեզմէ: Շարունակէնք և խոնարհութեամբ համագործակցինք մէկգմէկու, այս հասարակաց փրկութեանը գործին մէջ, քանի որ պատեհութիւնը մեր ձեռքն է: Հոգիով բորբոքելով մեկգմէկու համար աղօթք և բարեխօսութիւն մատուցանենք Հօրը, որ մեզ մինչև վերջը հաւատարիմ պահէ և ժրջան: Իմաստութեան խօսք դնէ մեր բերանը, որ մէկ քանիններ կրակէն ազատենք, և քաջութիւն տայ մեզի որ Իր խօսքը անվերապահութեամբ քարոզենք: Վ. Գ. Մ.

Ե. — «Բանքեր»էն կը լսենք Ձեր շինիչ խօսքերը իւրաքանչիւր ամիս: Իրապէս աս թերթը վերջին տարիներուն շատ աւելի ճշտացած է: որուն համար շատ ուրախ եմ, աս միայն իմ վկայութիւնս է, վստահ եմ որ ուրիշ շատ մը ընթերցողներու արձագանքն ալ է: «Բանքեր»ին կողքին վրայ գտնուող երգերը մասնաւոր հմայք մը ունին, կը մաղթեմ որ մօտ օրերս այդ երգերու հայերէն մէկ հաւաքածոն եւս լոյս տեսնելով, մեր տուները և եկեղեցիները ալցիւնէ... Ե.

Ֆ. — ... թէև ժամանակին չգրեցի իմ սովորութեանս համեմատ, սակայն Տէրոջը սէրը չը թողուր որ բոլորովին լուռ մնամ: Ան սրտիս մէջ դրաւ որ այս նոր տարւոյն մէջ ուրախութիւնս յայտնեմ թերթին օրէ օր ճոխանալուն համար: Խմբագրականդ, որն յաւէտ գոհաբանական էր և մեր պէտքերուն համար աղաչանք կը սորվեցնէր, սիրտս շատ ուրախացուց: Կ'աղօթեմ որ Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով Ձեր թէ՛ հոգեւոր և թէ՛ մարմնաւոր պիտոյքը լեցնէ Իր Յովուութեանը չափովը փառքով: Փիլ. 4. 19. «Ես ու իմ տունս» վերնագրով վկայութիւնն ալ շատ հոգիով լեցուած վկայութիւն մ'էր: Նաև Արդիականին դարձը: Ի՛նչ հիանալի է տեսնել թէ Աստուած պզտիկ, չնչին արարածներով Իր ծրագիրը յառաջ կը տանի, հոգիներ փառքի մէջ մտցնելու համար վերջին վայրկեանին իսկ... Ե. Թ.

Հ. — Անոր սիրովը մեզի հանդէպ Ձեր ունեցած համակրութեան և տաքուկ յարաբերութեան

համար, Տէրոջ փառք տուած եմ, Ձեզի ալ անձնապէս շնորհակալութիւն կը յայտնեմ: Մանաւանդ «Բանքեր» օրհնարեր թերթին համար: Ինծի օրհնութիւն եղած շատ հատուածներ գտած եմ մէջը: Ոտանաւորները շատ ախորժակով կարդացած և օգտուած եմ, երգերէն ալ ոմանք սորված եմ եղանակով: Տէրը կ'օրհնէ, Փառք Ծրեն որ խոստմանը համեմատ, պարապին չհանեց Իր խօսքը «Բանքեր»ով ալ: Եռայ. 55. 41: Կ'աղօթենք որ Տէրը Ձեր և բոլոր Իր գործաւորներուն միջոցաւ ցանուած սերմերը օրհնութիւն ընէ «Բանքեր»ով և Իր խօսքը յառաջանայ և փառաւոր ըլլայ, ուր որ ան կ'երթայ... Պ.

Վալօնա. — Սիրելի եղբայրներս և քոյրերս, ես երկար 12 տարիներէ իվեր հեռու մնացած եմ ճշմարիտ հաւատացեալներու ընկերակցութենէն եւ աղօթքի ժողովներէն, հոս Ալպանիա իյնալուս պատճառաւ: Ասիկա մեծ անպատեհութիւն մ'է հոգեւոր եղբօր մը համար, թէև Սր. Գիրքը միշտ իմ կեանքիս ընկերը ըրած եմ:

Սակայն փա՛ռք Տէրոջը, որ ժամանակէ մը իվեր «Բանքեր»ը ստանալով ինքզինքս անոր միջոցաւ Ձեզ հետ յարաբերութեան մէջ դրած կը գգամ և գոցցիս Ձեր աղօթքի ժողովներուն մէջ կը կարծեմ անձս, շարունակ կարդալով պանազան հոգիներու արթնութեան արտայայտութիւնները ու խոստովանութիւնները, որոնք յոյժ ուրախութիւն կ'աղթեն հոգեւոյս, և միանգամայն հաւաքիս մէջ զօրանալու և հաստատուելու, մեծապէս կը սատարէ ու կ'օգնէ: Այնպէս որ Պօղոս Առաքեալին պէս կրնամ ըսել, «Եթէ ձեր հաւատքին պատարագին ընծայութիւն, կ'ուրախանամ և ձեր ամենուն ուրախակից կ'ըլլամ». Փիլ. Բ. Գլ. 17 համար: Ուրեմն բարեբաղդ համարեցէք ձեր անձերը, որ կը դնուիք հաւատացեալներու բազմութիւնով շրջապատուած տեղ մը, որ աղօթքի ժողովներ ունիք և կարող հոգեւոր պաշտօնեաներ, որոնց քարոզները լսելու օրհնութիւնը կը վայելէք: Կը փափաքիմ որ քնաւ չի բացակայիք ժողովներէն և աղօթք ընելէ, և զիս մեղաւորս ալ յիշելու ձեր աղօթքներուն մէջ, որ ես ալ հոս առանձնութեանս մէջ, կարենամ բարի վկայութիւնս տալ Յիսուս Քրիստոսի համար: Մանաւանդ ներկայ ժամանակին մէջ, որ այնքան օրերը չար են, ըստ Առաքեալին պատուէրին որ կ'ըսէ. «Ժամանակը ծախու տոէք, ինչու որ օրերը չար են». Եփես. Ե. Գլ. 46 համար:

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ